ՕՐՀՈՒՍԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Նախագիծ
(2021-2024թթ.)

Հայաստանի Հանրապետություն

1. **<u>Զեկույցի պատրաստման գործընթացը</u>**

Ներկայացրեք համառոտ տեղեկատվություն զեկույցի պատրաստման գործընթացի վերաբերյալ՝ նշելով, թե պետական ինչ մարմինների հետ են անցկացվել խորհրդակցություններ կամ ինչ պետական մարմիններ են ներդրում ունեցել դրա պատրաստման մեջ, ինչպես են իրականացվել հասարակության հետ խորհրդակցությունները, ինչպես նաև, նշել թե ինչպես են հաշվի առնվել այդ խորհրդակցությունների արդյունքները և ինչ նյութեր են օգտագործվել որպես զեկույցի պատրաստման հիմք:

Օրհուսի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) իրականացման վերաբերյալ Հայաստանի ազգային զեկույցը (այսուհետ՝ Զեկույց) պատրաստել է Կոնվենցիայի ազգային համակարգողը Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ), այլ պետական մարմինների, Երևանի Օրհուս կենտրոնի, հասարակական կազմակերպությունների, Երևանի պետական համալսարանի Ա. Իսկոյանի անվան էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ:

Զեկույցի կազմման գործընթացն առավել մասնակցային և թափանցիկ կազմակերպելու, ինչպես նաև ամբողջական տեղեկատվության ընդգրկումն ապահովելու նպատակով Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) ֆինանսավորմամբ ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (Հայհիդրոմետ) պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) Օրհուս կենտրոնի (այսուհետ՝ Երևանի Օրհուս կենտրոն) կողմից իրականացվում է «Օրհուս կենտրոնների ուժեղացում՝ նպաստելով արդյունավետ բնապահպանական կառավարմանը և կայուն զարգացմանը» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում՝

- Կոնվենցիայի ազգային համակարգողի հետ համագործակցությամբ ՇՄՆ համապատասխան մասնագիտական ստորաբաժանումներն ու շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝

ՀԿ-ներ) տեղեկացվել են ծրագրի, ինչպես նաև Զեկույցի նախապատրաստական աշխատանքների մեկնարկի վերաբերյալ:

- Էլեկտրոնային հարցաշարի միջոցով ՀԿ-ներին հնարավորություն է ընձեռնվել միանալու նախապես ձևավորված Օրհուսի կոնվենցիայի երեք դրույթների՝ տեղեկատվության մատչելիություն, որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցություն և արդարադատության մատչելիություն ֆոկուս-խմբերին (հարցաշարի հղումը՝ https://docs.google.com/forms/d/16KcPTkYPFWE2Oqhk0BwO8toURmCzrDYrO0GOIyNkekw/preview?pli=1):

Նախապատրասական գործընթացին մասնակցել եմ պետական և ՀԿ հետևյալ կառույցները.

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ՀՀ վիճակագրական կոմիտե
Երևանի Օրհուս կենտրոն
ԵՊՀ Ա. Իսկոյանի անվան էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն
Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ
«Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ,
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ,
«Դալմա-Սոնա հիմնադրամ» կրթամշակութային, սոցիալ-բնապահպանական հիմնադրամ
Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ
«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ
«Կանաչ տանիք» ՀԿ
«Խազեր» էկոլոգամշակութային ՀԿ
«Շողեր» ՀԿ նախագահ
«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ
Media.am կայք

Երևանի Օրհուս կենտրոնը, համագործակցելով Կոնվենցիայի ազգային համակարգողի հետ, մշակել է հետևյալ հարցաշարերը, որոնք օգտագործվել են ֆոկուս-խմբերի քննարկումների ընթացքում:

ա) Ֆոկուս-խումբ 1՝ Տեղեկատվության մատչելիություն

1. Օրենսդրական, կանոնակարգող և այլ միջոցառումներ, որոնք վերաբերում են Օրհուսի կոնվենցիայի 4-րդ և 5-րդ հոդվածներին
2. Օրհուսի կոնվենցիայի 4-րդ և 5-րդ հոդվածների իրականացման խոչընդոտներ
3. Հավելյալ տեղեկատվություն Օրհուսի կոնվենցիայի 4-րդ և 5-րդ հոդվածների առնչությամբ
4. Պաշտոնական կայքերի և այլ էլեկտրոնային հարթակների հղումներ, որոնք վերաբերում են Օրհուսի կոնվենցիայի 4-րդ և 5-րդ հոդվածներին

բ) Ֆոկուս-խումբ 2՝ Հասարակության մասնակցություն որոշումների կայացման գործընթացին

1. Օրենսդրական, կանոնակարգող և այլ միջոցառումներ, որոնք վերաբերում են Օրհուսի կոնվենցիայի 6-րդ, 7-րդ և 8–րդ հոդվածներին
2. Օրհուսի կոնվենցիայի 6-րդ, 7-րդ և 8–րդ հոդվածների իրականացման խոչընդոտներ
3. Հավելյալ տեղեկատվություն Օրհուսի կոնվենցիայի 6-րդ, 7-րդ և 8–րդ հոդվածների առնչությամբ
4. Կայքերի և այլ հղումներ, որոնք վերաբերում են Օրհուսի կոնվենցիայի 6-րդ, 7-րդ և 8–րդ հոդվածներին

գ) Ֆոկուս-խումբ 3՝ Արդարադատության մատչելիություն

1. Օրենսդրական, կանոնակարգող և այլ միջոցառումներ, որոնք վերաբերում են Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածին
2. Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի իրականացման խոչընդոտներ
3. Հավելյալ տեղեկատվություն Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի առնչությամբ
4. Կայքերի և այլ հղումներ, որոնք վերաբերում են Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածին

2025 թվականի մարտի 14-ին «Հայիիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «Օրհուսի կոնվենցիայի և բնապահպանական մյուս կոնվենցիաների սիներգիան տեղեկատվության մատչելիության և հանրային մասնակցության համատեքստում» խորագրով աշխատաժողով: Նպատակն էր քննարկել և բացահայտել Օրհուսի կոնվենցիայի և մյուս բնապահպանական կոնվենցիաների միջև սիներգետիկ կապերը, ինչպես նաև ապահովել, որ ՀՀ-ի կողմից վավերացված բոլոր կոնվենցիաների շրջանակներում իրականացված գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը պատշաճ կերպով ներկայացվի Զեկույցում:

Ֆոկուս խմբային և հասարակական քննարկումների ժամանակ, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ՀԿ-ների ներկայացուցիչների ներկայացրած առաջարկներն ու դիտողությունները հաշվի են առնվել Զեկույցի պատրաստման ընթացքում:

Հասարակական քննարկումները անցկացվել են ՇՄՆ, այլ պետական մարմինների, Օրհուս կենտրոնի և ՀԿ-ների ակտիվ մասնակցությամբ:

Զեկույցի պատրաստման ընթացքում օգտագործվել են ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը, օրենսդրական նախագծերը, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը, ինչպես նաև կոնվենցիայի իրականացմանն ուղղված այլ միջոցառումները:

2. ՀԱՏՈՒԿ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ ԶԵԿՈՒՅՑԸ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Տեղեկացրեք ցանկացած հատուկ հանգամանքների մասին, որոնք կարևոր են զեկույցը

հասկանալու համար, օրինակ՝ գործում է արդյոք որոշումների ընդունման ֆեդերալ կամ ապակենտրոնացված մեխանիզմ, ենթակա են արդյոք Կոնվենցիայի դրույթներն անմիջական կիրառման Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից, և արդյոք սուղ ֆինանսական միջոցները էական խոչընդոտ են հանդիսանում Կոնվենցիայի իրագործման ճանապարհին (պարտադիր չէ):

ՀՀ կողմից Օրհուսի կոնվենցիան վավերացնելուց հետո (01.08.2001թ.) բնապահպանական ժողովրդավարության զարգացման ուղղությունը վերաձևավորվել է՝ նպատակ ունենալով համապատասխանեցնել բնապահպանական քաղաքականությունը արևմտյան չափանիշներին: Փոփոխությունների են ենթարկվել բնապահպանական նորմերին վերաբերող սահմանադրական դրույթները[1], ինչպես նաև փոփոխվել է ազգային օրենսդրությունը[2]:

ՀՀ-ում բազմաթիվ օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններից հետո ստորագրվել է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր ՀՀ-ն՝ մի կողմից և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև (CEPA, 24.11.2017թ., ուժի մեջ է մտել 01.06.2018թ.)[3]:

CEPA-ի շրջանակում բնապահպանական ոլորտում նախատեսված են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ հասարակության համար բնապահպանական տեղեկատվության հասանելիության ապահովմանն ուղղված գործողություններ: Նշենք, որ համաձայնագրի դրույթները (91.1-91.5 կետեր) անմիջականորեն արտացոլում են Կոնվենցիայի պահանջները[4]:

2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո նախագահական կառավարման ձևից ՀՀ-ն անցում կատարեց կառավարման խորհրդարանական համակարգի:

Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրության և օրենքների համաձայն՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքների հիման վրա:

ՀՀ ՇՄՆ-ն գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների խելամիտ օգտագործման ոլորտներում մշակում և իրականացնում է պետական քաղաքականությունը:

---

[1] 27.11.2005թ. ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ. ՀՀ Սահմանադրություն

[2] www.env.am; Օրենսդրություն ենթաբաժին. http://env.am/orensdrutyun/orenqner

[3] Համաձայնագրի տեքստը հասանելի է հղումով՝ https://www.eeas.europa.eu/eeas/eu-and-armenia-comprehensive-and-enhanced-partnership-agreement-enters-force_en

[4] https://www.mfa.am/ru/bilateral-relations/eu

ՀՀ ՇՄՆ-ն իր գործունեությունն իրականացնում է իր կանոնադրության հիման վրա, որը հաստատվել է ՀՀ վարչապետի **2018թ. հունիսի 11-ի N 745-L որոշմամբ**[5]:

Փոփոխության է ենթարկվել նաև շրջակա միջավայրին առնչվող սահմանադրական դրույթը (ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդված), մասնավորապես՝ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական ռեսուրսների խելամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունը ապագա սերունդների նկատմամբ[6]:

2021, 2022 և 2023 թվականներին ՀՀ պետական բյուջեում նախատեսվել է նաև հատուկ տող, որն ուղղված է բնապահպանական աշխարհայացքի ձևավորմանը, բնակչության էկոլոգիական դաստիարակությանը էկոլոգիական մտածելակերպի ձևավորմանը՝ բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրության միջոցով: Բնապահպանական կրթության ծրագրերի բյուջետային ֆինանսավորումը որոշակիորեն նպաստում է Օրհուսի կոնվենցիայի անուղղակի իրագործմանը, սակայն 2020 թվականից ի վեր ՀՀ բյուջեում Օրհուսի կոնվենցիայի իրականացման համար հատուկ ֆինանսական միջոցներ նախատեսված չեն եղել: Սա, անշուշտ, հանգեցրել է որոշակի հետևանքների, մասնավորապես՝ պաշտոնական փաստաթղթերի և օրենքների թարգմանությունների ապահովման, միջոցառումների կազմակերպման և այլ գործընթացների համար անհրաժեշտ ֆինանսավորման պակասի:

3. 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ, 3-ՐԴ, 4-ՐԴ, 7-ՐԴ ԵՎ 8-ՐԴ ԿԵՏԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ

Թվարկեք 3-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ կետերի հիմնական դրույթների իրագործմանն ուղղված օրենսդրական և կարգավորող այլ միջոցները:

Պարզաբանեք, թե ինչպես են իրագործվել նշված դրույթները: Մասնավորապես ներկայացրեք.

*ա) **2-րդ կետի** մասով – ձեռնարկված միջոցառումները, որոնք ուղղված են ապահովելու, որպեսզի պաշտոնատար անձինք և պետական մարմիններն անհրաժեշտության դեպքում ուղղորդեն հասարակությանը:*

*բ) **3-րդ կետի** մասով - էկոլոգիական կրթության և շրջակա միջավայրի հիմնահարցերի*

[5] http://env.am/naxararutyun/charter

[6] Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին (ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդված): Հարկ է նշել, որ նշված հոդվածի փոփոխությունն արժանացել է որոշակի քննադատության: Նոր ձևակերպումը, որը հիմնված է Սահմանադրության նախորդ տարբերակի 10-րդ և 33.2-րդ հոդվածների և սահմանադրական կարգի սկզբունքների վրա, սահմանում է, որ **շրջակա միջավայրի պահպանությունը ոչ միայն պետության պարտավորությունն է, այլև յուրաքանչյուր անձի պարտականությունը**: Առաջին անգամ է, որ շրջակա միջավայրի պահպանությունը դիտարկվում է **կայուն զարգացման սկզբունքի համատեքստում**: Նման դրույթ արդեն առկա էր Սահմանադրության նախորդ խմբագրության 48-րդ հոդվածի 10-րդ կետում, սակայն այն լիովին չէր արտացոլում կայուն զարգացման սկզբունքի էությունը:

առնչությամբ հասարակայնության իրազեկության մակարդակի բարձրացմանը նպաստելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները:

*գ) **4-րդ կետի** մասով - շրջակա միջավայրի պաշտպանությանն աջակցող միությունների, կազմակերպությունների կամ խմբերի պատշաճ ճանաչման և նրանց համապատասխան աջակցություն ցույց տալու ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:*

*դ) **7-րդ կետի** մասով - միջազգային գործընթացներում Կոնվենցիայի սկզբունքների կիրառմանն աջակցելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները, մասնավորապես՝*

(i) Նախարարությունների ներսում և վերջիններիս միջև համագործակցության շրջանակներում այլ համապատասխան միջազգային ֆորումներում ընդգրկված պաշտոնյաներին 3-րդ հոդվածի 7-րդ կետի, Ալմաթայի սկզբունքների վերաբերյալ իրազեկման գործընթացը համակարգելուն ուղղված միջոցների մասին՝ նշելով, թե արդյոք այդ միջոցները շարունակական են:

(ii) Ազգային մակարդակում Միջազգային ֆորումների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովելուն ուղղված միջոցները, ներառյալ այն, թե որ փուլում է ապահովվել տեղեկատվության մատչելիությունը:

(iii) Միջազգային ֆորումների առնչությամբ ազգային մակարդակում հասարակայնության մասնակցությունը հնարավոր դարձնելու և խթանելու ուղղությամբ (օրինակ՝ հրավիրել ՀԿ-ներին Կողմի պատվիրակության կազմում մասնակցելու բնապահպանական հարցերով միջազգային բանակցություններին կամ ներգրավել ՀԿ-ներին Կողմի պաշտոնական դիրքորոշումը մշակելու աշխատանքներին)՝ ներառյալ այն, թե որ փուլում է ապահովվել տեղեկատվության մատչելիությունը:

(iv) Այլ միջազգային ֆորումներում Կոնվենցիայի սկզբունքների կիրառմանը նպաստելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները:

(v) Այլ միջազգային ֆորումների աշխատանքային ծրագրերում, նախագծերում, որոշումներում և այլ նշանակալից արդյունքներում Կոնվենցիայի սկզբունքների կիրառմանը նպաստելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները:

*ե) **8-րդ կետի** մասով - սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան իրենց իրավունքներն իրականացնող անձանց պատժի, հետապնդման կամ հալածանքի չենթարկվելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները:*

ՀՀ Սահմանադրության 51-րդ և 53-րդ հոդվածները սահմանում են Օրհուսի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ կետի իրականացման նախադրյալները, մասնավորապես՝ յուրաքանչյուր ոք պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկատվություն ստանալու և փաստաթղթերին

ծանոթանալու իրավունք ունի: Տեղեկատվություն ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկատվության թաքցնելու կամ դրա տրամադրման անհիմն մերժման դեպքում պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով: Օրենքով սահմանվում է նաև անհատականորեն կամ այլ անձանց հետ համատեղ պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմում (պետիցիա) ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը: Այս ամենի մասին մանրամասնորեն սահմանված է օրենքով:

2021 թվականի փետրվարի 26-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարի N61-Լ հրամանով ստեղծվել է նախարարին կից հասարակական խորհուրդ, հաստատվել է խորհրդի անհատական կազմը և աշխատակարգը[7]: 2024 թվականի ապրիլի 23-ին նախարարի 134-Լ հրամանով փոփոխվել է հասարակական խորհրդի անհատական կազմը[8]:

ՀՀ ՇՄ նախարարին կից գործող հասարակական խորհուրդը անկախ խորհրդատվական մարմին է, որը համակարգում է հասարակության մասնակցությունը բնապահպանական ծրագրերի, պլանների և քաղաքականության մշակման գործընթացում: Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով:

2024 թվականին մշակվել և առնչվող մարմինների ու շահագրգիռ կողմերի շրջանում քննարկման է դրվել ՀՀ վարչապետի որոշման նախագիծը ՀՀ նախարարությունների հասարակական խորհրդի աշխատակարգը և ձևավորման կարգը հաստատելու մասին:Նախագծում հասցեական լուծումներ են տրվել մշտադիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքում վերհանված խնդիրներին և բացերին:

ՇՄՆ իրավասությունների շրջանակներում նախատեսված է քաղաքացիների ընդունելության կարգ էլեկտրոնային հարթակներով՝ www.e-gov.am և www.e-request.am, որոնց նպատակն է ստեղծել միասնական հարթակ ՀՀ ամողջ տարածքում պետական հաստատությունների էլեկտրոնային կառավարման գործիքների համար: Բացի այդ, գործում է www.azdarar.am կայքը՝ հասարակական ծանուցումների համար, որի նպատակն է, օրենքով կամ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում ապահովել հասարակական ծանուցում:

- 2018 թվականի փետրվարի 22-ին ընդունվել է ՀՀ Կառավարության արձանագրային N7 որոշումը՝ «Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարության հաստատման մասին»: 2022 թվականի հունվարի 1-ից որոշումը չեղարկվել է: Էկոլոգիական կրթության և դաստիարակության նոր ռազմավարություն դեռևս չի ընդունվել:

---

[7] file:///C:/Users/Mari.Chakryan/Downloads/61-l.pdf

[8] http://env.am/naxararutyun/the-councils-attached-to-the-minister

- Փոփոխություններ են կատարվել ՇՄՆ կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 745-Լ որոշման մեջ՝ ՀՀ վարչապետի 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 138-Լ որոշմամբ: Հետագա տարիներին ևս փոփոխություններ են կատարվել վարչապետի 745-Լ հրամանում՝ տալով համապատասխան կարգավորումներ[9]:

- 2019 թվականի փետրվարի 8-ի Կառավարության ծրագրի թիվ 65-Ա որոշման հավելվածի «4.8 Շրջակա միջավայր» բաժնում որպես շրջակա միջավայրի կառավարման գերակա ուղղություն ամրագրվել է էկոլոգիական գիտության դերի բարձրացումը, էկոդաստիարակության, էկոմշակույթի և էկոկրթության լայնածավալ միջոցառումների իրականացումը:

Կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի հաստատման մասին թիվ 650-Լ որոշմամբ (16.05.2019 թ. Կառավարություն) ամրագրվել են հետևյալ միջոցառումները.

1. Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին օրենքում օրենսդրական փոփոխությունների իրականացման վերաբերյալ օրինագծի մշակում (օրինագիծըգտնվում է լրամշակման փուլում),
2. Հանրության իրազեկման մեխանիզմների կիրառման միջոցով ոչ ֆորմալ էկոկրթության համակարգի զարգացում,
3. Տեղեկատվության ազատության մասին օրենքում օրենսդրական փոփոխությունների մշակում՝ այն Օրհուսի կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու նպատակով:

2018 թվականի փետրվարի 22-ին ընդունվել է ընդերքօգտագործման արդյունքում առաջացող ազդեցության կանխարգելման և բնապահպանական կորուստների նվազեցման մոնիթորինգի պահանջների իրականացման հաշվետվությունների ներկայացման կարգը հաստատելու մասին Կառավարության թիվ 191-Ն որոշումը (ուժի մեջ է մտել 2018 թվականի մարտի 17-ին)[10]: Որոշման շրջանակում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Ընդերքօգտագործողները ՇՄՆ են ներկայացնում եռամսյակային հաշվետվություններ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նվազեցման վերաբերյալ, ինչպես նաև տարեկան հաշվետվություններ, որոնք տեղադրվում են նախարարության կայքում:
- Ստեղծվել են իրավական հիմքեր շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման ավելի արդյունավետ համակարգի (այդ թվում՝ տեղեկատվական տեսանկյունից) ձևավորման համար:

---

9 https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=188335

10 https://www.arlis.am/documentview.aspx?docID=120135

- Կարգավորվել է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նվազեցման մոնիթորինգի արդյունքների պետական մարմիններին ներկայացման գործընթացը (տեղեկատվական տեսանկյունից):
- Տեղեկատվության ապահովման առումով կարգավորվել է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նվազեցման մոնիթորինգի արդյունքները պետական մարմիններին ներկայացնելու գործընթացը:

- 2018 թվականի մարտի 21-ին ընդունվել են ՀՀ «Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքում» կատարված օրենսդրական փոփոխությունները: Օրենսգրքի 69-րդ հոդվածը լրացվել է նոր դրույթով, որի համաձայն՝ պետական լիազոր մարմինը իր կայքում ամեն տարի հրապարակում է ընդերքօգտագործողների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը:

Բացի վերը նշված օրենսդրական փոփոխություններից, նախաձեռնվել են նաև հետևյալ ծրագրերը.

- 2019 թվականին մեկնարկել են «Էկոհարթակ» («Առաջին ալիք» հեռուստաալիքով հեռարձակվող հաղորդաշար - https://www.facebook.com/permalink.php?id=632109480568732&story_fbid=740897133023299) և «Ձեր բնապահպանը» (Հայաստանի հանրային ռադիոյով հեռարձակվող 12 հաղորդաշար) ծրագրերը[11], որոնք նպատակ ունեն բացահայտելու բնապահպանական խնդիրները և տարածելու բնապահպանական գիտելիք: Հաղորդումները հեռարձակվել են Հայաստանի ամբողջ տարածքում և երկրի սահմաններից դուրս՝ նախատեսված նաև Սփյուռքի ներկայացուցիչների համար (): «Էկոհարթակ» հեռուստահաղորդումը 2020 թվականից չի թողարկվում:

Օրենքով նախատեսվում է համայնքներում էկոկրթության և դաստիարակության խթանման լրացուցիչ գործառույթ: Այս գործառույթի պատշաճ կատարման և համայնքներին աջակցության նպատակով GEF-ի և UNDP-ի ֆինանսավորմամբ իրականացվել է «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ծրագիրը: Դասընթացների թեմաներն ընդգրկել են՝ կենսաբազմազանություն, հատուկ պահպանվող տարածքներ, անտառներ, ջրային ռեսուրսներ, հողերի պահպանություն, կլիմայի փոփոխություն, ընդերքօգտագործում, վերականգնվող էներգիա, էներգախնայողություն, այլ: Դասընթացներին մասնակցած համայնքային ծառայողները ներգրավվելու են համայնքներում էկոկրթության և դաստիարակության գործընթացներում: Ծրագրի շրջանակում քաղաքացիական և համայնքային ծառայողների համար մշակված կրթական նյութերը հասանելի են ծրագրով վերապատրաստված դասընթացավարներին և կարող են կիրառվել նաև հետագայում նմանատիպ վերապատրաստման դասընթացների իրականացման համար:

---

11 https://hy.armradio.am/category/programs/ձեր-բնապահպանը/

- Կրթական և իրազեկման ծրագրերը, ներառյալ համայնքներում, իրականացվում են ՀՀ ՇՄՆ, գիտության, կրթության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ), ինչպես նաև միջազգային և ՀԿ-ների հետ համագործակցությամբ՝ համատեղ մշակված ուսումնական և մեթոդական ուղեցույցների հիման վրա:

- Հիմք ընդունելով «Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարությունը», ինչպես նաև ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները՝ մշակվել են «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենսդրական նախաձեռնություններ: Այս օրենսդրական փոփոխությունները միջազգային կոնվենցիաների դրույթների լիարժեք տեղայնացման նպատակ են հետապնդում և բխում են նաև 2019-2023 թվականների Կառավարության միջոցառումների ծրագրից: Նախագիծը հանրային քննարկման է դրվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում 2022 թվականի հուլիսին[12], սակայն դեռևս լրամշակման փուլում է:

- ՀՀ ՇՄՆ և ԿԳՄՍՆ նախարարության համատեղ նախաձեռնությամբ, Կառավարությունը մասնագիտությունների ցանկում ավելացրել է «Սառնարանային տնտեսություն» նոր մասնագիտությունը: Մշակվել է պետական ուսումնական ստանդարտ, և այդ նպատակով նախատեսվել է 3 տեղ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

- 2019 թվականի աշնանը «Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» կրթահամալիրում բացվել է տարածաշրջանային կենտրոն՝ շարունակական կրթության և վկայագրման համար: Կենտրոնում Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (Հայաստանի և Թուրքմենստանի) մասնագետների համար անցկացվել են վերապատրաստումներ սառնարանային տնտեսության և կլիմայական հարցերի վերաբերյալ: Ծրագիրն իրականացվել է ՇՄՆ և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հետ համագործակցությամբ՝ Ռուսաստանի Դաշնության Մոնրելաի արձանագրության նպատակների իրականացման համար տրվող անդամավճարի շրջանակում: Տարածաշրջանային կենտրոնը հավաստագրվել է EU REAL Alternatives 4 LIFE ծրագրի շրջանակում՝ որպես վերապատրաստման ուսումնական կենտրոն, որի դասախոսները վերապատրաստվել են նույն ծրագրի շրջանակում և ստացել դասախոսելու հավաստագրեր: Կենտրոնի գործունեությունը շարունակվում է:

էկոլոգիական մտածելակերպի և էկոլոգիական վարքագծի ձևավորման և զարգացման նպատակով, ինչպես նաև էկոլոգիական թեմատիկայի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների միավորման նպատակով դպրոցականների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, բուհերի ուսանողների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների համար կրթական ծրագրեր է իրականացրել նաև Օզոնի Ազգային կենտրոնը[13]: Դասընթացները բարեհաջող ավարտողներն ստացել են **REAL Alternatives 4 LIFE**

---

[12] https://www.e-draft.am/projects/4533/about

[13] https://saveozone.am/en/post/chanachoghakan-ayc-amberd-ozonachapakan-kayan;

հավաստագիր, որն ընդունվում է նաև ԵՄ տարածքում: - Հայաստանի մարզերում էկոլոգիական կրթության խթանման և բնապահպանական հարցերի մասին իրազեկության մակարդակի բարձրացման նպատակով Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ) ՇՄՆ հետ համագործակցությամբ նախաձեռնել է մի շարք գործողություններ: ECOserve ծրագրի էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի իրազեկության բարձրացման բաղադրիչի շրջանակում, «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ-ն մշակել է «Էներգապոլիա» սեղանի խաղը 11-100 տարեկանների համար, սուճի սեղանի շուրջ էներգաարդյունավետությանն առնչվող թեմաներով զրույցներ է իրականացրել երեք մարզերի գյուղական համայնքների կանանց հետ: 2024 թվականին EU4Sevan ծրագրի ներքո մշակվել են Սևանա լճի պահպանության մոդուլ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ավագ խմբերի համար և «Սևանա լճի պահպանություն» ուսուցչի ձեռնարկներ կրտսեր, միջին և ավագ դպրոցների համար: Մոդուլը և ձռնարկները հաստատվել են ՇՄՆ և ԿԳՄՄՆ կողմից և շուտով կներդրվեն ուսումնական հաստատություններում:

- ՇՄՆ-ն ՄԱԶԾ հետ համատեղ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ կանանց հարցերով խորհրդի հետ համագործակցությամբ ամեն տարի կազմակերպում է «Կլիմայի փոփոխությունը և կանայք Հայաստանում» խորագիրը կրող միջոցառում-մրցանակաբաշխություն, որի նպատակն է ճանաչել կանանց ներդրումը և առաջնորդությունը կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանն ուղղված գործողություններում և լուծումներում:

Էկոկրթության և տեղեկացվածության մակարդակի բարձրացման նպատակով ՇՄՆ-ն ենթակա կառույցներում պարբերաբար դպրոցականների, ուսանողների և այլ շահառուների համար իրականացվում են բնապահպանական միջոցառումներ, մասնավորապես, 2021-2024 թվականներին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- 2022 թվականին ՇՄՆ-ն գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացրել է մի շարք բնապահպանական միջոցառումներ

- «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի հետ իրականացվել է էկոակումբների երիտասարդական գագաթնաժողով:
- «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում ամփոփվել է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (ՄԱԱԶԿ) հետ համատեղ իրականացվող «Ինստիտուցիոնալ համակարգի հզորացում և կարողությունների ստեղծում» ծրագրի շրջանակում կրթահամալիրի սաների հետ հանդիպումների շարքը:

---

https://saveozone.am/en/post/chanachoghakan-ayc-amberd-ozonachapakan-ditakayan-epth-ovsanoghneri-hamar ;
https://saveozone.am/en/post/aeptemberi-16-chanachoghakan-ayc-amberd-ozonachapakan-ditakayan ;
https://saveozone.am/en/post/ozonayin-sherti-pahpanovtyan-hamashkharhayin-or-2023t

- «Խոսե՛նք բնությունից» հանդիպումների շարքի շրջանակում ՇՄՆ ներկայացուցիչներն այցելել են «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր: Հանդիպման ընթացքում խոսվել է հողային և ընդերքի ռեսուրսների պահպանությունից, ԲՀՊՏ-ների և կենսաբազմազանության կառավարումից և էլեկտրոմոբիլների օգտագործման խթանմանն ուղղված ՇՄՆ քաղաքականությունից:
- EU4Sevan ծրագրի շրջանակում, «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ն, ՇՄՆ հետ համագործակցությամբ իրականացրել է «Սևանի ընկերներ» ծրագրի եզրափակիչ միջոցառումը: Ծրագրի նպատակն էր բարձրացնել երիտասարդների իրազեկվածությունը Սևանա լճի էկոհամակարգի պահպանության ու վերականգնման կարևորության մասին: Ծրագիրը ընդգրկել է Գեղարքունիքի մարզի շուրջ 35 համայնք, 40 դպրոց և ավելի քան 4000 մեծ ու փոքր մասնակից: 2022 թվականի ապրիլից նոյեմբեր ամիսներին իրականացվել է 32 վեբինար, 55 թեմատիկ բաց դաս և քննարկում, ընտրված 12 դպրոցների ուսուցիչների և ծրագրի դեսպանների վերապատրաստում, 5 թեմատիկ մոդուլի մշակում: Շուրջ 1500 հանդիսատես դիտել է «Սևանի աղերսը» թատերական ներկայացումը:
- Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ Դրախտիկ գյուղում:
- «Օզոնային շերտի պահպանություն» ծրագրի շրջանակներում մեկնարկել է իրազեկման արշավ նախադպրոցական ուսումնական հաստատություններում:
- Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առթիվ «Բնությունը երեխաների աչքերով» բնանկարների ցուցադրություն Երևանի բուսաբանական այգում:
- «Երիտասարդներն հանուն փոփոխության» (Youth For Change) ծրագիրն իրականացվել է Սյունիքի մարզում՝ «Արևիք» ազգային պարկում (ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ):
- «Թանգարանային գիշեր» միջոցառման շրջանակում միջոցառումների շարք Հայաստանի բնության պետական թանգարանում:
- Շրջակա միջավայրի նախարարն այցելել է Այբ դպրոց՝ ծանոթանալու բնագիտական ուղղվածությամբ իրականացվող ծրագրերին և հանդիպելու RenéMask նախագծի հեղինակներին, ովքեր հեղինակավոր The Earth Prize 2022-ին աշխարհի 114 երկրից 516 դպրոցների շարքում դիմորդ-թիմերի լավագույն տասնյակում են հայտնվել:
- «Հարմարվողականության ազգային ծրագիր Հայաստանում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի շրջանակում տեղի է ունեցել «Դիմակայենք կլիմայի փոփոխությանը՝ գաղափարից մինչև իրականացում» եռօրյա դասընթացը:

- 2023 թվականին

- Հայաստանի բնության պետական թանգարանում տեղի են ունեցել «Երկրորդ կյանք թափոնին» խորագրով էկոկրթական աշխատարան, Երեխաների իրավունքների պաշտպանության օրը բնապահպանական բաց դաս, Կարմիր գիրքը, անհետացման եզրին գտնվող բույսերը և կենդանիները, դրանց պահպանությունը թեմայով հանդիպումներ դպրոցականների հետ, «ՄԱԿ-ի կայուն զարգացման 17 նպատակներին» նվիրված ուսումնական նախագծի մասնակից սաների հանդիպումը նախարարության

աշխատակիցների հետ, Ջրային պաշարների համաշխարհային օրվա առթիվ էկոկրթական հանդիպում, բնապահպանական խաղերի շնորհանդես:

- «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկն ագրոկրթական կենտրոնում համախմբել է Հայաստանի մարզերի 40 երիտասարդների՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ դասախոսություններ, համայնքներում բնապահպանական նորարարական լուծումներ մշակելու և ներկայացնելու համար:
- ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում տեղի է ունեցել «Մոնրեալի արձանագրությունը ՄԱԿ-ի կայուն զարգացման օրակարգի համատեքստում» կլոր-սեղան քննարկում ավագ դպրոցների սաների մասնակցությամբ:
- «Խոսե՞նք բնությունից» բնապահպանական հանդիպումների շարքի երկրորդ փուլ:
- Երևանի Օրհուս կենտրոնում տեղի է ունեցել խոնավ տարածքների օրվան նվիրված հանդիպում-քննարկում:

- Շրջակա միջավայի նախարարությունը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում ամփոփվել է ՄԱԱԶԿ-ի հետ համատեղ իրականացվող «Ինստիտուցիոնալ համակարգի հզորացում և կարողությունների ստեղծում» ծրագրի շրջանակներում կրթահամալիրի սաների հետ հանդիպումների շարքը:

- 2024 թվականին
-
- Նշվել է բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) օրը:
- Հայաստանի բնության պետական թանգարանում նշվել է Լեռների միջազգային օրը:
- «Երկրորդ կյանք թափոնին» աշխատարան հանուն շրջակա միջավայրի:
- Միջոցառում՝ նվիրված կենդանիների պաշտպանության համաշխարհային օրվան:
- Կենսաբազմազանության միջազգային օրը ՀԼՄ ներկայացուցիչների այց «Խոր Վիրապ» պետական արգելավայր՝ ծանոթանալու միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքի էկոհամակարգի վերականգնման արդյունքներին:
- էկոլոգիական կրթության համաշխարհային օրը Հայաստանի բնության պետական թանգարանում հերթական էկոկրթական միջոցառումը՝ նվիրված Սևանա լճի էկոհամակարգին:
- Հայաստանի կենդանական և բուսական աշխարհի Կարմիր գրքին նվիրված միջոցառում:
- Վտանգավոր թափոններ. ճանաչողական դաս Հայաստանի Բնության պետական թանգարանում:
- Բազմակի օգտագործման կտորե տոպրակների կիրառման խթանմանը նվիրված բնապահպանական միջոցառում-աշխատարան դպրոցականների մասնակցությամբ:

Ամեն տարի ԲՀՊՏ-ներում, կամ դրանց աշխատակազմի նախաձեռնությամբ իրականացվում են բազում էկոկրթական միջոցառումներ տարբեր տարիքային խմբերի համար (Տես աղյուսակ 1).

ՊՈԱԿ-ի անվանումը	Միջոցառումներ և մասնակիցներ	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.
«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Միջոցառում	12	12	31	26
	Մասնակից	-	500	1257	845
«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ	Միջոցառում	35	25	25	23
	Մասնակից	-	1848	1589	1571
«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ	Միջոցառում	50	42	50	55
	Մասնակից	-	1100	1825	1600
«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ	Միջոցառում	15	18	18	20
	Մասնակից	-	500	500	600
«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ	Միջոցառում	22	28	35	23
	Մասնակից	-	705	1244	973
«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ	Միջոցառում	29	10	9	14
	Մասնակից	-	200	200	435

Աղյուսակ 1

Բացի թվարկվածից, Կոնվենցիայի ազգային համակարգողը պարբերաբար հանդիպումներ է ունեցել ավագ դպրոցի աշակերտների հետ, ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետի ուսանողների հետ, ներկայացրել Օրհուսի կոնվենիայի սկզբունքները, Հայաստանի ստանձնած պարտավորությունները և ընթացիկ աշխատանքները:

2020 թվականին մշակվել է ՀՀ-ում կենսաբազմազանության պահպանության և օգտագործման նոր ռազմավարության ճանապարհային քարտեզը: 2024 թվականին մշակվել է Կենսաբազմազանության 2026-2030 ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը, 2025 թվականի ապրիլի 15-ի դրությամբ այն քննարկումների փուլում է: Ռազմավարության կից առանձին փաստաթուղթ է մշակվել կենսաբազմազանության հանրահռչակման վերաբերյալ, որը ենթադրում է հստակ գործողությունների պլանավորում այս ուղղությամբ: 2020 թվականին պետք է մշակվեր նաև հատուկ պահպանվող տարածքների նոր ռազմավարությունը, սակայն այն դեռևս չի մշակվել:

Փոփոխություններ են կատարվել «Կենդանական աշխարհի մասին» օրենքում՝ կենդանական

աշխարհի կադաստրի վարման վերաբերյալ, մասնավորապես մեթոդական ուղեցույցների հաստատման և ՀՀ տարածքում վայրի կենդանիների սոցիալական նպատակներով օգտագործման վերաբերյալ:

Մշակվել է ԲՀՊՏ-ների մասին ներ օրենքի նախագիծ, որը հաշվի է առնում ՀՀ ժամանակակից կարիքներն ու օրենսդրական պահանջները: Օրինագծով առաջարկվում է նոր կատեգորիա՝ «պահպանվող լանդշաֆտ», որը համապատասխանում է IUCN V կատեգորիային (PROTECTED LANDSCAPE/SEASCAPE): «Պահպանվող լանդշաֆտը» ստեղծվում է տեղական ինքնակառավարման մարմինների որոշման հիման վրա: Օրենքի նախագիծը դեռևս չի ընդունվել:

Նախատեսվում է նոր հատուկ պահպանվող տարածքների ստեղծում: Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և էկոտուրիզմի զարգացման նպատակով պարբերաբար հրատարակվում են բրոշյուրներ և այլ նյութեր՝ ի նպաստ իրազեկության բարձրացման և տեղեկատվության տարածման:

ԵՄ շրջանակներում մշակվել է ջրային ռեսուրսների մասին էկոպորտալ: Ջրի որակի տվյալները համապատասխանեցվել են Եվրոպական ջրային տեղեկատվական համակարգին: Այն այժմ համատեղելի է եվրոպական տվյալների բազայի (WISE) հետ:

Էկոպորտալը նպատակ ունի ներառելու շրջակա միջավայրի մասին ամբողջական տեղեկատվություն, սակայն ներկայումս ներառում է միայն ջրային ռեսուրսների վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ ոլորտային քաղաքականությունը, ջրավազանային կառավարման պլանները, քարտեզներ, տվյալներ ինդիկատորների մասին և առանձին ենթաբաժին Սևանա լճի վերաբերյալ[14]

Այսպիսով, բնապահպանական կրթական ծրագրերին նպաստումը և իրականացումը ՀՀ ՇՄՆ գործունեության անբաժանելի մասն է: Բնապահպանական կրթական ծրագրեր են իրականացվում ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում՝ նպատակ ունենալով ապահովել բնակչության համաչափ զարգացումը բնապահպանական գիտելիքների ձեռքբերման ոլորտում:

c) ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման: Միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

---

14 https://ecoportal.am/en/page/home/

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ միայն դատարանի որոշմամբ:

«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը նախատեսում է կազմակերպությունների ստեղծման կարգը, դրանց պետական գրանցման հիմքերը, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչպես նաև կազմակերպության գործունեության հետ կապված այլ հարցեր: ՀԿ-ն գրանցելու համար պետք է այցելել https://www.e-register.am/am/docs կայքը: Այս կայքում ներկայացված են բոլոր քայլերը, ինչպես նաև փաստաթղթերի օրինակները ՀԿ-ների, ՍՊԸ-ների, ԲԲԸ-ների, ՓԲԸ-ների գրանցման համար: Կայքում առկա են բոլոր օրենքները և ենթաօրենսդրական ակտերը, որոնք վերաբերում են գրանցման գործընթացին, կայքն ընձեռում է նաև ՀԿ-ների կողմից ներկայացված հաշվետվությունների ձևանմուշների, գրանցման ուղեցույցի և ՀԿ-ների համար փաստաթղթերի առցանց ստացման հնարավորություն:

Երևանի Օրհուս կենտրոնը զգալի ներդրում է ունեցել հանրային մասնակցության խթանման գործընթացում՝ մասնակցելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և դրա ենթաօրենսդրական ակտերի նախագծերի քննարկումներին: Այդ ընթացքում կենտրոնը ներկայացրել է առաջարկություններ և իրականացրել լայնածավալ իրազեկման աշխատանքներ:

2021-2024 թվականների ընթացքում Երևանի Օենտրոնը պատասխանել է 72 տեղեկատվական հարցման՝ արձագանքելով ուսանողների, դասախոսների, ՀԿ-ների ներկայացուցիչների, ինչպես նաև անհատ քաղաքացիների՝ այդ թվում արտերկրից ստացված գրավոր և բանավոր հարցումներին:ՇՄՆ-ն իր պաշտոնական կայքում պարբերաբար հրապարակում է հայտարարություններ դրամաշնորհային ծրագրերի կամ սեմինարների, ինչպես նաև ՀԿ-ների ներկայացուցիչների համար նախատեսված տարբեր միջոցառումների մասին:

d) i) ii) iii) iv) v)

Եթե միջազգային կազմակերպության հրավերը նախատեսում է ՀԿ-ների կամ այլ մարմինների մասնակցությունը միջազգային ֆորումին, ապա ՇՄ նախարարությունը նամակ է ուղարկում այդ մարմիններին՝ թեկնածու առաջադրելու համար: Թեկնածուներին ներգրավելուց հետո նախարարությունը ներկայացնում է բոլոր մասնակիցների ցուցակը: Բայց դա միայն այն դեպքում, եթե կազմակերպիչը նախարարությունից պահանջում է ներկայացնել թեկնածուներ: Մնացած դեպքերում ՀԿ-ների ներկայացուցիչներն իրենք են ուղղակիորեն գրանցվում և մասնակցում միջազգային սեմինարներին:

2022 թվականին «Կենսաբազմազանության հզորացված պաշտպանություն և կայուն օգտագործում Հայաստանում՝ Եվրոպական միության չափանիշներին համապատասխան» ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում ԲՀՊՏ-ների կառավարման փորձին ծանոթանալու նպատակով

Չեխիա և Էստոնիա այցերի ժամանակ պատվիրակության կազմում ՇՄՆ ներկայացուցիչների հետ համատեղ ընգրկվել են նաև գիտական հաստատությունների և ՀԿ-ների ներկայացուցիչներ[15]:

2023 և 2024 թվականներին Ստոկհոլմի Կոնվենցիայի Չեխիայի Հանրապետությունում գտնվող կարողությունների զարգացման և տեխնոլոգիաների փոխանցման տարածաշրջանային կենտրոնի նախաձեռնությամբ տեղի ունեցած դասընթացների շարքին մասնակցող պատվիրակության կազմում ընդգրկվել է նաև ՀԿ: Դասընթացները նվիրված են եղել նոր ցուցակագրված Կայուն օրգանական աղտոտիչներին և ազգային հաշվետվությունների ներկայացման գործիքներին:

2024 թվականի հոկտեմբերի 14-18-ը, Էներգաարդյունավետության լրացուցիչ միջոցառումներ սառնամատակարարման ոլորտում» ծրագրի շրջանակում տեղի է ունեցել ճանաչողական այց Պոդգորիցա (Մոնտենեգրոյի Հանրապետություն): Հայաստանի պատվիրակության կազմում ընդգրկվել են ինչպես ՇՄՆ, ՏԿԵՆ, այնպես էլ Սառեցման, օդորակման և ջեռուցման ինժեներական հայկական ասոցիացիայի ներկայացուցիչներն ու «Օզոնային շերտի պահպանություն» ծրագրի փորձագետները[16]:

e) ՀՀ Սահմանադրությանը համապատասխան Կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքները իրականացնող անձինք չեն կարող ենթարկվել պատժի, հետապնդման կամ ոտնձգությունների: ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածը սահմանում է, որ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Սահմանադրության 26-րդ հոդվածը սահմանում է, որ ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Կոնվենցիայի ազգային համակարգողը լրատվամիջոցներին և ՀԿ-ներին տեղեկատվություն է տրամադրել Կոնվենցիայի ներքո ստեղծված նոր մեխանիզմի՝ Բնապահպան ակտիվիստների իրավունքների պաշտպանի ինստիտուտի մասին[17]:

4. 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 3-րդ հոդվածի վերոնշյալ կետերից ցանկացածի դրույթների իրագործման ժամանակ:

Չնայած պետական ծառայողների համար իրականացվել են վերապատրաստման ծրագրեր, նրանց էկոլոգիական պատրաստվածության մակարդակը դեռևս բավարար չէ:

---

15 https://www.ecolur.org/en/news/biodiversity/14043/ ; https://www.ecolur.org/en/news/biodiversity/14444/ ; https://www.ecolur.org/en/news/biodiversity/14188/

16 https://saveozone.am/en/post/chanachoghakan-ayc-montenegroyi-hanrapetovtyovn

17 https://www.aliqmedia.am/2022/06/30/70604/ ; https://www.ecolur.org/hy/news/electionspoliticsecology/14169/

Թեև անցկացվել են դասընթացներ բնակչության էկոլոգիական իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ, սակայն նման ծրագրերը պետք է անցկացվեն շարունակաբար:

Օրհուս կենտրոնների գործունեության ակտիվությունը կախված է իրավական անորոշ կարգավիճակից և անբավարար ֆինանսավորումից կամ նույնիսկ ֆինանսավորման բացակայությունից: Ֆինանսավորման դեպքում այդ կենտրոնները կարող էին մեծ աջակցություն ցուցաբերել Կոնվենցիայի իրագործման գործընթացում, մասնավորապես՝ 3-րդ հոդվածի իրականացման համար:
Միջազգային ֆորումներում հանրության մասնակցությունը խթանելու ոլորտում կան ֆինանսական խոչընդոտներ:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն 3-րդ հոդվածի հիմնական դրույթների կիրառման վերաբերյալ:

Շատ ՀԿ-ներ իրենց գործունեության ընթացքում ակտիվորեն հիմնվում են Կոնվենցիայի դրույթների վրա: Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ընդունված իրավական ակտերը, որպես կանոն, հիմնված են և հիմնականում բխում են Օրհուսի կոնվենցիայի դրույթներից: Որոշումներ կայացնելիս դատարանները հիմնվում են Կոնվենցիայի դրույթների վրա: Հատկապես այն դրույթները, որոնք վերաբերում են ազգային օրենսդրությանը: Բնապահպանական տեղեկատվության հասանելիության կամ որոշումների կայացմանը մասնակցելու համար դատարան դիմելիս քաղաքացիները և ՀԿ-ները նաև վկայակոչում են Կոնվենցիան:

02.05.2013 թվականին ընդունվել է ՀՀ օրենքը «Արդարադատության ակադեմիայի մասին»: Ակադեմիայի գործառույթները ներառում են դատավորների և դատախազների մասնագիտական վերապատրաստման ապահովումը: Շարունակվում են աշխատանքները բնապահպանական իրավունքի և Օրհուսի կոնվենցիայի վերաբերյալ դատավորների և դատախազների տեղեկացվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ ավելացնելով դասախոսությունների ժամերի քանակը: Արդարադատության ակադեմիայի շրջանակներում յուրաքանչյուր կիսամյակ անցկացվում են վերապատրաստումներ (9 ակադեմիական ժամ տևողությամբ) բնապահպանական իրավունքի և Օրհուսի կոնվենցիայի վերաբերյալ՝ գործող դատավորների, դատախազների, դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց համար: Օրհուսի կոնվենցիայի վերաբերյալ դատավորների և դատախազների իրազեկվածության շարունակական բարձրացման նպատակով ՇՄՆ-ն

քննարկել է 2020 թվականին Կոնվենցիայի երեք հիմնասյուների վերաբերյալ համաժողով անցկացնելու հնարավորությունը:

2020 թվականին ԵՊՀ-ն հրապարակել է էկոլոգիական իրավունքի ուսուցողական ձեռնարկ: Այն կարող է ծառայել որպես ուսումնական ձեռնարկ իրավաբանական ֆակուլտետների, ոչ իրավաբանական ֆակուլտետների ուսանողների, պրակտիկայով զբաղվող փաստաբանների, դատավորների և դատախազների համար:

Երևանի Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ պարբերաբար կազմակերպվում են տեղեկատվական սեմինարներ, որոնք նպաստում են էկոլոգիական կրթությանը և հասարակության իրազեկմանը շրջակա միջավայրի խնդիրների մասին:
2018-2020 թվականներին Երևանի Օրհուս կենտրոնը կազմակերպել է հետևյալ միջոցառումները՝

2021-2024 թվականներին Երևանի Օրհուս կենտրոնը, շարունակելով իր աշխատանքը «Հայիիդրոմետ» ՊՈԱԿ-ի կազմում, տարբեր ձևաչափերով իրականացրել է բնապահպանական տեղեկատվության տարածում՝ ի նպաստ հանրության, հատկապես երիտասարդների բնապահպանական գիտելիքների ու իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Այդ միջոցառումները խթանել են քաղաքացիների ներգրավվածությունը շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող որոշումների կայացման գործընթացներում:

Կենտրոնը կազմակերպել է շուրջ 55 միջոցառում՝ հանրային քննարկումներ, կլոր-սեղաններ, մասնագիտական հանդիպումներ և էկոկրթական միջոցառումներ: Հատուկ ուշադրություն է դարձվել դպրոցականների և ուսանողների ներգրավմանը՝ կազմակերպելով ճանաչողական այցեր օդերևութաբանական և մոնիտորինգային կայաններ, գիտական հաստատություններ, որտեղ երիտասարդները ձեռք են բերել գործնական գիտելիքներ բնապահպանության ոլորտում:

Օրհուս կենտրոնը ակտիվ համագործակցել է ՀԿ-ների հետ՝ համատեղ կազմակերպելով արդիական թեմաների քննարկումներ: Կազմակերպվել են մի շարք առցանց դասընթացներ և թեմատիկ միջոցառումներ, այդ թվում աղբահավաքի ակցիա Երևանյան լճի ափին, բանավեճեր կանաչապատման և քաղաքային էկոհամակարգերի պահպանության թեմաներով:

Հանրային իրազեկման նպատակով կենտրոնը շարունակել է ակտիվ գործունեություն իրականացնել նաև սոցիալական ցանցերի միջոցով՝ տարածելով տեղեկատվություն բնապահպանական խնդիրների մասին, խթանելով միջազգային համագործակցությունն ու մասնագիտական կարծիքների փոխանակումը:

2019թ. Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ մշակվել է Էկոլոգիական տեղեկատվության մասին օրենքի նախագիծը: Աշխատանքային խմբում ընդգրկվել են ՇՄՆ, գիտական շրջանակների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Էկոլոգիական տեղեկատվության մասին օրենքի նախագիծը արտացոլում է Օրհուսի կոնվենցիայի դրույթները, ինչպես նաև ԵՄ հրահանգները: Օրենքի նախագիծը ներկայացվել է հանրային լսումների: Քաղաքացիական հասարակությունից եղել են բազմաթիվ առաջարկություններ[18]: Ներկայացված առաջարկներն ու դիտողությունները ներառվել են օրենքի նախագծում: Թագավարակի և պատերազմի պատճառով հետաձգվել են նախագծի նոր հանրային լսումները և դրա շրջանառության և ընդունման աշխատանքները: 2023 թվականին նախագիծը շրջանառվել է առնչվող նախարարությունների շրջանում, շրջակա միջավայրի նախարարի գլխավորությամբ աշխատանքային քննարկում է տեղի ունեցել ՇՄՆ-ում՝ Արդարադատության նախարարության և ԱԺ պատգամավորների մասնակցությամբ: Նախագծի ընդունումը մերժվել է:

Ամեն տարի ՇՄՆ-ն՝ նախարարի ղեկավարությամբ, նշում է Շրջակա միջավայրի պաշտպանության միջազգային օրը՝ հունիսի 5-ը: Միջոցառումներին հրավիրվում են ՀԿ-ների ներկայացուցիչներ, գիտական շրջանակների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կազմակերպվում են էկոլոգիական ֆիլմերի դիտումներ, ներկայացվում են նախարարության իրականացրած ծրագրերը և այլն: Ստորև ներկայացված են հղումներ՝ նախարարության կողմից օրվան շրջանակում իրականացված միջոցառումների վերաբերյալ:

http://env.am/news/environmental-day-06-2024

6. 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ

Նշեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան:

https://nature.e-gov.am/hy/, www.nature-ic.am, www.gov.am, www.env.am, www.aarhus.am, www.court.am, ,www.armstat.am, www.elrc.ysu.am, www.e-gov.am, www.e-register.am

7. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ

Թվարկեք օրենսդրական և կարգավորող այլ միջոցներ՝ ուղղված էկոլոգիական տեղեկատվության վերաբերյալ 4-րդ հոդվածի դրույթների իրագործմանը, որոնք վերաբերում են բնապահպանական տեղեկատվության մատչելիությանը:

Պարզաբանեք, թե ինչ կերպ են իրագործվում 4-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթները: Ներկայացրեք 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումների և 3-րդ հոդվածի

[18] Քաղաքացիական հասարակության արձագանքը օրենքի նախագծին. https://transparency.am/hy/publication/324

9-րդ կետի՝ խտրականություն չկիրառելու վերաբերյալ պահանջի արտացոլումը (ազգային օրենսդրության մեջ): Բացի այդ, նշեք մասնավորապես հետևյալը՝

ա) **1-ին կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որոնք կապահովեն, որպեսզի.

(i) յուրաքանչյուր ոք կարողանա ստանալ տեղեկատվություն առանց իր շահագրգռվածությունն արտահայտելու պահանջի,

(ii) տրամադրվեն պահանջվող տեղեկատվությունը պարունակող իրական փաստաթղթերի պատճենները,

(iii) տեղեկատվությունը տրմադրվի պահանջվող ձևով:

բ) **2-րդ կետում** սահմանված ժամկետների պահպանման ուղղությամբ ձեռնարկված միջոցները.

գ) **3-րդ և 4-րդ կետերի** մասով՝ ձեռնարկված միջոցները՝ ուղղված

(i) հարցումներից բացառություններ նախատեսելուն,

(ii) 4-րդ կետի վերջում նշված հասարակայնության շահագրգռվածության չափանիշի կիրառման ապահովմանը:

դ) **5-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որոնք կապահովեն, որ հարցվող էկոլոգիական տեղեկատվությունը չտնօրինող պետական մարմնի կողմից իրականացվեն անհրաժեշտ քայլեր:

ե) **6-րդ կետի** մասով՝ տեղեկատվության առանձնացման և դրա մատչելիության ապահովման վերաբերյալ պահանջի իրականցման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:

զ) **7-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որպեսզի մերժումները կատարվեն ժամկետների և մերժումներին վերաբերող այլ պահանջների պահպանմամբ:

է) **8-րդ կետի** մասով՝ վճարի գանձմանը վերաբերող պահանջների կատարումն ապահովող միջոցները:

2018-2020թթ. 4-րդ հոդված, 1-ին կետ

ա) 1-ին կետի վերաբերյալ՝ միջոցներ, որոնք ընդունվել են՝ ապահովելու համար, որպեսզի: i) ցանկացած անձ կարողանա տեղեկություն ստանալ՝ առանց անհրաժեշտության ներկայացնելու իր հետաքրքրվածությունը; ii) տրամադրվեն փաստացի փաստաթղթեր, որոնք պարունակում կամ ներառում են պահանջվող տեղեկությունը; iii) տեղեկությունը տրամադրվի պահանջվող ձևով;

Սահմանադրական մակարդակով ապահովված են իրավասու պետական մարմիններից տեղեկատվություն պահանջելու իրավական հիմքերը, ինչպես նաև պաշտոնատար անձանց պատասխանատվությունը (ինչպես արդեն նշվել է վերևում): Կոնվենցիայի 2-րդ հոդվածի սահմանման մասով՝ ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը (18.02.2004թ.) սահմանում և հաստատում է «վարչական մարմինների» ցանկը: Այս օրենքի նպատակներից ելնելով՝ այն չի պարունակում այս մարմինների գործառույթները, ի տարբերություն Կոնվենցիայի: Չնայած օրենսդրությունը չունի «շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության» սահմանում, սակայն գործնականում պետական մարմինների, դատական իշխանությունների գործունեության մեջ օգտագործվում է Կոնվենցիայով տրված սահմանումը:
Այս առնչությամբ հարկ է նաև նշել, որ 2019 թվականից ՀՀ-ում գործում է «Հանրագրերի մասին» օրենքը, որի իրավական հիմքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության 53-րդ հոդվածով, մասնավորապես, յուրաքանչյուր ոք իրավունք ունի անհատապես կամ այլ անձանց հետ համատեղ միջնորդություն ներկայացնել պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց և պատշաճ ժամկետում ստանալ համապատասխան պատասխան: Օրենքը նախատեսում է հանրագրերի ներկայացման կարգը, հանրագրերի բովանդակությունը, հանրագրերի հրապարակումը, հանրագրերի պատասխանի ներկայացումը և այլն: Օրենքը (հայերեն) հասանելի է հղումով. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119042 :

ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» գործող օրենքը (հոդված 3) տալիս է «տեղեկություն» հասկացության հետևյալ սահմանումը. տեղեկությունն անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ): Կարելի է անդրադառնալ Սահմանադրության 29-րդ հոդվածին, որը սահմանում է. «Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքը (21.06.2014) պարունակում է դրույթ, որ լիազոր մարմինը ծանուցումն ստանալուց հետո յոթ օրվա ընթացքում պլանավորված գործունեության իրականացման նախաձեռնության մասին ծանուցում է ազդակիր համայնքապետարանների ղեկավարներին և հանրությանը (հոդված 26):

Ազդեցության ենթակա համայնքների ղեկավարները և ձեռնարկատերը լրատվամիջոցների միջոցով հանրությանը տեղեկացնում են նախատեսվող գործունեության, հանրային լսումների տեղի և ժամանակի մասին: Սույն օրենքի համաձայն՝ հանրությունը տեղեկացվում է նաև

առաջարկվող նախագծի վերաբերյալ մասնագիտական կարծիքի մասին: Օրենքը նաև սահմանում է յուրաքանչյուրի իրավունքը՝ նախքան հանրային լսումների անցկացումը փաստաթղթերին ծանոթանալու հնարավորության մասին:

Հարկ է նշել, որ 2019 թվականին մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, որտեղ վերանայվել են գործող օրենքի բոլոր դրույթները և համապատասխանեցվել Կոնվենցիայի դրույթներին:

«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքը (12.12.1992 թ.) նախատեսում է «քաղաքացիների իրավունքը՝ ստանալու հավաստի և ամբողջական տեղեկատվություն սանիտարահամաճարակային իրավիճակի մասին» (10-րդ հոդվածի 2-րդ կետ): Նույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված է ՀՀ կառավարության սահմանած կարգով սանիտարական նորմերի խախտման հետևանքով առողջությանը պատճառված վնասի համար փոխհատուցում ստանալու քաղաքացիների իրավունքը: Նույն օրենքի համապատասխան հոդվածը նախատեսում է, որ բոլոր հաստատություններն ու կազմակերպությունները կարող են պետական մարմիններից ստանալ տեղեկատվություն շրջակա միջավայրի, բնակչության առողջության և սանիտարական նորմերի վերաբերյալ:

«Քաղաքաշինության մասին» օրենքը (05.05.1998թ.) հանրությանը տալիս է քաղաքաշինական գործունեության և իրենց գործունեության միջավայրում նախատեսվող փոփոխությունների մասին հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունք (հոդված 13):

«Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են զանգվածային լրատվության միջոցներում հրապարակումներով, հասարակական քննարկումներով, ծրագրերի և նախագծերի ցուցադրման միջոցառումներով իրազեկել ֆիզիկական և իրավաբանական անձանց կենսագործունեության միջավայրի, տարածքի գոտիավորման և քաղաքաշինական նախատեսվող այլ փոփոխությունների մասին» (հոդված 14):

Քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանրության ներկայացուցիչներն իրավունք ունեն՝ ա) ստանալ հավաստի տեղեկատվություն իրենց կենսամիջավայրի պլանավորված փոփոխությունների մասին, բ) մինչև հրապարակված քաղաքաշինական ծրագրերը և նախագծերը հաստատելը, մասնակցել քննարկումներին, ներկայացնել նորմատիվ և իրավական ակտերով հիմնավորված դիտողություններ, առաջարկություններ, այլընտրանքային նախագծեր և ծրագրեր. գ) տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունները վիճարկել դատարանում («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք):

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքը (02.12.1998 թ.)

նախատեսում է՝ ա) արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ առաջացման մասին պետական մարմիններին և բնակչությանն ազդարարումը (հոդված 5): Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության վերաբերյալ հարցերի հրապարակումն իրականացվում էր ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի №1494-Ն որոշմամբ հաստատված Կառավարման մարմինների և բնակչության իրազեկման կարգի համաձայն:

2017 թվականին Կառավարության 346-Ն որոշման համաձայն ընդունվել է Արտակարգ իրավիճակների կամ դրա սպառնալիքի ժամանակ բնակչությանը ծանուցելու նոր կարգը: Կառավարության կողմից հաստատված որոշման կարգը նախատեսում է «արտակարգ դեպք» հասկացությունը, որը ներառում է նաև շրջակա միջավայրը: Ընթացակարգը նախատեսում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները՝ զանգվածային լրատվության և այլ միջոցներով արտակարգ իրավիճակներում բնակչությանը ծանուցելու վերաբերյալ:

2020 թվականին փոփոխություններ են կատարվել «Արտակարգ իրավիճակներում ՀՀ բնակչության պաշտպանության մասին» օրենքում: Օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է բնակչությանը պաշտպանելու նպատակով պատսպարելու սկզբունքները, մասնավորապես բնակչության պատսպարումն իրականացվում է համապատասխան ազդանշանների միջոցով՝ բնակչությանը պաշտպանելու մասին ահազանգելու նպատակով:

2019 թվականին շրջանակռվել է «Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Աղետների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում է ստեղծել ռիսկերի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ: Օրենքի նախագիծը նախատեսում է բնակչության իրազեկում, տեղեկատվության և հետադարձ կապի հասանելիության ապահովում, ինչպես նաև նախատեսում է իրավասու մարմնի պարտավորությունն՝ ապահովելու տեղեկատվության տրամադրումը: Օրենքի նախագիծը տեղադրված է https://www.e-draft.am/projects/2151/about կայքում: Կայքը հասանելի է լայն հանրությանը՝ վերանայման նպատակով և բաց է առաջարկների և մեկնաբանությունների համար:

«Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքում օրենսդրական փոփոխություններ են կատարվել փրկարար ծառայության իրավասությունների ընդլայնման վերաբերյալ, մասնավորապես, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության նպատակով, որը նախատեսում է լուծումների ստացում, ամփոփում և մշակում, ինչպես նաև ծանուցման աշխատանքների կազմակերպում և իրականացում:

«Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի (01.02.1999) 12-րդ հոդվածը (Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում տեղեկություններ ստանալու իրավունք) սահմանում է, որ ՀՀ իրավաբանական և ֆիզիկական անձինք իրավունք ունեն պետական իրավասու մարմիններից ստանալ տեղեկություններ՝ նախագծվող, կառուցվող, շահագործվող և շահագործումից հանվող ատոմային էներգիայի

օգտագործման օբյեկտների անվտանգության, ինչպես նաև ՀՀ-ում ճառագայթային իրավիճակի վերաբերյալ, եթե դրանք պետական կամ ծառայողական գաղտնիք չեն պարունակում:

Հանրային մասնակցությունը.

Ջրային օրենսգրքի 20-րդ հոդվածի (04.06.2002թ.) համաձայն՝ լիազորված պետական մարմինը հանրությանը տեղեկացնում է ջրային քաղաքականության, ջրավազանային կառավարման ծրագրերի, ջրօգտագործման թույլտվությունների հետ կապված հարցերի մասին և ապահովում է հանրության մասնակցությունը դրանց քննարկման գործընթացում: ՀՀ ջրային օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական ջրային կադաստրի տեղեկատվական համակարգերի միջոցով տեղեկատվության տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը»: Ջրային կադաստրն ապահովելու համար մոնիտորինգը պետք է տրամադրի հետևյալ տեղեկությունները. 1) ջրային ռեսուրսների քանակական ցուցանիշների, այդ թվում՝ ձնածածկույթների, 2) ջրային ռեսուրսների որակական ցուցանիշների, 3) ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության, 4) ջրային ռեսուրսների վրա մարդածին ազդեցությունների հետևանքների, ներառյալ՝ աղտոտման, 5) կեղտաջրերի և դրանցում գտնվող նյութերի կազմի ու քանակների, 6) ջրային ռեսուրսների վերականգնման, 7) ջրհեղեղների, սելավների, երաշտների կանխատեսումների, 8) ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների և դրանց վիճակի, 9) մթնոլորտային տեղումների և մթնոլորտի ջերմաստիճանային ռեժիմի, 10) ջրօգտագործման թույլտվությունների և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների, 11) ջրի ազգային ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ: Պետական ջրային կադաստրի տվյալները համարվում են պաշտոնական: Սահմանված է պարտավորություն ներկայացնել ջրային ռեսուրսների մոնիտորինգի վերաբերյալ համապարփակ հաշվետվություն, որը ներառված է Ջրային ազգային ծրագրի կատարման վերաբերյալ կառավարության տարեկան հաշվետվությունում:

«Ստանդարտացման մասին» օրենքը (08.02.2012թ.) ստանդարտացման նպատակների թվում սահմանում է արտադրության, ծառայությունների և գործընթացների անվտանգության մակարդակի բարելավումը, մարդկանց առողջության ու կյանքի և շրջակա միջավայրի պահպանությունը:

«Հիդրոօդերեւութաբանական գործունեության մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն (2001 թ.) նախատեսվում է, հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների մասին հույժ շտապ տեղեկատվության, այսինքն՝ տարերային երևույթների և շրջակա միջավայրի աղտոտման վտանգավոր մակարդակների վերաբերյալ փաստացի և կանխատեսվող տեղեկատվության հրապարակում, որը սահմանված կարգով հաղորդվում է ստանալուց ու մշակելուց անմիջապես հետո:

«Պետական վիճակագրության մասին» օրենքը (04.04.2000թ.) սահմանում է, որ Պետական վիճակագրությունն իրականացվում է պետական վիճակագրություն իրականացնող մարմնի՝

Ազգային վիճակագրական ծառայության և նրա տարածքային ու գործառնական ստորաբաժանումների կողմից (հոդված 6): Ծրագրով նախատեսված դիտարկումների անցկացման համար վիճակագրական տեղեկություններ տրամադրողները պարտավոր են սահմանված կարգով անվճար տրամադրել անհրաժեշտ տվյալներ թղթային կամ էլեկտրոնային ձևաչափով՝ սպառողի պահանջի համապատասխան (հոդված 12): Վիճակագրական դիտարկումների ծրագրով ընդգրկված վիճակագրական տվյալները սուբյեկտներին պետք է սահմանված կարգով տրամադրվեն անվճար՝ սպառողի նախընտրած թղթային և էլեկտրոնային ձևաչափով (հոդված 12):

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը (2002 թ.) նախատեսում է, որ համայնքի ավագանին իրավունք ունի պայանջել պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից համայնքի խնդիրներին վերաբերող և օրենքով սահմանված գաղտնի տեղեկություններ չպարունակող փաստաթղթեր: Համայնքի ղեկավարն իր լիազորությունների շրջանակում նպաստում է օգտակար հանածոների, անտառների, ջրերի, մթնոլորտային օդի, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության միջոցառումների իրականացմանը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքը (27.11.2006) սահմանում է յուրաքանչյուրի իրավունքը՝ ա) պահանջել և ստանալ հատուկ պահպանվող բնական տարածքների կարգավիճակի, պահպանության և օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն. բ) նշված տեղեկատվությունը ստանալու համար դիմել լիազորված պետական մարմնին և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնին, որի վարչական սահմաններում գտնվում է տեղական նշանակության ԲՀՊՏ-ը: Բնապահպանական վերահսկողության մարմինը պարտավոր է հանրության, այդ թվում՝ ՀԿ-ների պահանջով տեղեկատվություն տրամադրել բնապահպանական օրենսդրության համապատասխանության մասին: Օրենքը լրամշակման փուլում է, այն պետք է համապատասխանեցվի Կենսաբանական բազմազանության 2022 թվականի դեկտեմբերին ընդունված համաշխարհային շրջանակին, ինչը ենթադրում է, որ ԲՀՊՏ-երի առավել մասնակցային կառավարման մեխանիզմներ կներառվեն: **«Բնապահպանական վերահսկողության մասին»** օրենքի (11.04.2005թ.) հոդված 37-ի համաձայն՝ «Հասարակայնության, ներառյալ՝ հասարակական կազմակերպությունների պահանջով բնապահպանական օրենսդրության կիրարկման վերաբերյալ տեղեկատվությունը բնապահպանական պետական տեսչությունը տրամադրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն հոդվածով սահմանված կարգով»: Բնապահպանական օրենսդրության կիրարկումն արդյունավետ իրականացնելու նպատակով բնապահպանական պետական տեսչությունը կատարվող աշխատանքների մասին կարող է տեղեկացնել հասարակայնությանը՝ միաժամանակ պահպանելով գաղտնիությունն ու ձեռնպահ մնալով գործերի քննության ընթացքի մանրամասներ տրամադրելուց, ինչպես նաև հասարակայնությանը կարող է ներգրավել բնապահպանական օրենսդրության խախտման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին: Բնապահպանական պետական տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանումներին օրենսդրության խախտման դեպքերի վերաբերյալ հասարակայնության տրամադրած ակնհայտ կեղծ

տեղեկատվությունը առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Մարդկանց առողջության վրա շրջակա միջավայրի ազդեցության մասին հանրային իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով տեղեկատվությունը տեղադրվում է ՀՀ առողջապահության նախարարության կայքում (www.moh.am) և սոցիալական ցանցերում: Բնակչությունը տեղեկացվում է ԶԼՄ-ների և տարբեր հաղորդումների միջոցով: Բնապահպանական իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու նպատակով ընդունվել են հետևյալ իրավական ակտերը՝

1) ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 22-ի հրաման բնակչության առանձին խմբերի համար բնականոն պայմաններում բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման ծրագիրը հաստատելու մասին

2) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի մայիսի 15-ի N 1199-Ա հրաման առանձին վիրուսային հիվանդությունների ժամանակ հանրային համախմբման ծրագիրը հաստատելու մասին

3) Կառավարության նիստի (04.02.2016թ.) արձանագրությունը ներառում էր գործընթացներ՝ կապված բարձր աղտոտվածության տարածքներում բնապահպանական ռիսկերի մասին բնակչության իրազեկվածության բարձրացման պիլոտային ծրագրերի մշակման հետ:

ՀՀ կառավարությունը գործարկել է www.e-gov.am կայքէջը, որտեղ ի թիվս այլնի ներառված է տեղեկատվություն Կառավարության, Վարչապետի որոշումների և այլնի վերաբերյալ: Կայքում նախապես տեղադրվում են Կառավարության որոշումների նախագծերը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքը /www.armstat.am/ ներառում է ամբողջական և մատչելի վիճակագրական տեղեկատվություն հանրապետության բնապահպանական վիճակի վերաբերյալ (Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրը և բնական պաշարները, տարեկան վիճակագրական ամփոփագիր): Վերջինս, բացի pdf ֆայլից, հասանելի է նաև Word և Excel ձևաչափերով՝ սպառողների համար մատչելիությունն ու օգտակարությունը բարձրացնելու նպատակով: Պետք է գործարկվի նաև (ընթացքի մեջ է) ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի կայքը (http://armstatbank.am), որը վիճակագրական տեղեկատվական բազաներից օգտվելն ավելի հասանելի կդարձնի:

«Տեղեկատվության ազատության մասին» (23.09.2003թ.) օրենքը (հոդված 4) սահմանում է տեղեկատվության ազատության ապահովման հետևյալ հիմնական սկզբունքները՝ տեղեկատվության գրանցման, դասակարգման և պահպանման միասնական ընթացակարգի սահմանում, տեղեկատվություն որոնման և ստացման ազատության պաշտպանություն, տեղեկատվության հասանելիության ապահովում, հրապարակայնություն:

Բնապահպանական տեղեկատվության հավաքագրման և տարածման կարևորագույն

մարմինը/գործիքը ՇՄՆ «Հայհիդրոմետ» կենտրոնն է: Կենտրոնի կայքը ներկայացնում է մթնոլորտային օդի, ջրի, հողի, թափոնների և անտառների մոնիտորինգի տվյալները: Գործում է որոնման համակարգ, որտեղ պետք է մուտքագրել տարին, ինչպես նաև շաբաթական կամ ամսական ռեժիմը, ամիսը և քաղաքը Հայաստանում և ծանոթանալ մթնոլորտային օդի, ջրերի և այլնի մասին տեղեկատվությանը[19]:

«Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ն իր կանոնադրության համաձայն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լաբորատոր հետազոտությունների և անալիզների իրականացում,
2) հիդրոերկրաբանական տեղեկատվությունների (խորհրդատվությունների) կազմում և տրամադրում,
3) ստորերկրյա ջրերի հանքավայրերի լոկալ կամ փոքր տեղամասերում սահմանափակ տեխնածին գործոնների ազդեցությամբ ձևավորվող ստորերկրյա ջրերի ռեժիմի հատուկ դիտողական ցանցի դիտակետերում ջրերի քանակի և որակի ուսումնասիրությունների իրականացում,
4) հիդրոօդերևութաբանական տեղեկատվության տրամադրում և մասնագիտացված հիդրոօդերևութաբանական ծառայությունների մատուցում,
5) մթնոլորտային երևույթների ռադիոլոկացիոն դիտարկումներ և համապատասխան տեղեկատվական ծառայությունների մատուցում, աշխարհատեղեկատվական համակարգի և հեռազննման տեխնոլոգիաներով հետազոտությունների իրականացում:
ՊՈԱԿ-ի կայքը պարունակում է տեղեկատվություն երեք լեզվով. https://armmonitoring.am/#home :

Տվյալ տեղեկատվությունը տարածում է նաև Երևանի Օրհուս կենտրոնը՝ էլեկտրոնային փոստով և սոցիալական ցանցերով:

Հարցում ներկայացնելու և քննարկելու ընթացակարգը կարգավորող «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը ընդգծում է, որ դիմողը պարտավոր չէ հիմնավորել իր հարցումը: Քրեական օրենսգիրքը և վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը որպես երաշխիք նախատեսում են պաշտոնատար անձանց նկատմամբ պատժամիջոցներ: Մասնավորապես, քրեական պատասխանատվություն է նախատեսվում շրջակա միջավայրի աղտոտման մասին տեղեկատվությունը թաքցնելու և դիտավորյալ խեղաթյուրելու, պետական և տեղական նշանակության քարտեզագրական և երկրաֆիզիկական ֆոնդի (գերատեսչական) պահպանման պետական կարգը խախտելու, նյութերի և տվյալների պատճենահանման և օգտագործման, վթարի փաստը թաքցնելու, վթարի մասին տեղեկատվության փոխանցման կարգը խախտելու, ճառագայթման վերաբերյալ սխալ տեղեկատվության փոխանցման, միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկատվության (տվյալների) չտրամադրման կամ կեղծ տեղեկատվության (տվյալների) տրամադրման համար: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն

---

19 https://armmonitoring.am/page/5

«Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, և դա անհնար է պարզել տվյալ հարցմանը՝ սույն օրենքով սահմանված ժամկետում պատասխանելու համար, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է տեղեկատվության տրամադրման ավելի կարճ ժամկետներ, քան Օրհուսի կոնվենցիան: Մասնավորապես, գրավոր հարցման պատասխանը պետք է տրամադրվի հետևյալ ժամկետներում. «1. եթե գրավոր հարցումում նշված տեղեկատվությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը տրվում է հայտատուին հարցումն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում, 2. եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկատվությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամանակի մասին տեղեկությունը տրամադրվում է հայտատուին հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, 3. եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը: Չնայած տեղեկատվության տրամադրման հնգօրյա ժամկետի օրենսդրական պահանջին, այդ ժամկետն անիրատեսական է և հաճախ խախտվում է:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն «Բանավոր հարցմանը պատասխան տրվում է լսումներից անմիջապես հետո կամ, հնարավորության դեպքում, կարճ ժամկետում»: Օրենքի 4-րդ հոդվածի 3 և 4 կետերը և 8-րդ հոդվածը հիմքեր են ստեղծում Օրհուսի կոնվենցիային համապատասխան տեղեկատվություն տրամադրելուց հրաժարվելու համար: Օրենքը չի պարունակում Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 4-րդ կետի «ը» և «թ» ենթակետերով նախատեսված հիմքերը, որոնցից վերջինը զուտ բնապահպանական բնույթ ունի: Սույն օրենքը սահմանում է նաև, որ եթե պահանջվող տեղեկատվության մի մասը պարունակում է տրամադրման ոչ ենթակա տվյալներ, ապա տեղեկատվությունը տրամադրվում է մնացած մասի վերաբերյալ: Դիմողի՝ իր հետաքրքրությունը չհիմնավորելու իրավունքն ամրագրված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետով՝ «Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը»: Բացառությունը վերաբերում է պետական և ծառայողական գաղտնիքներին, որոնց սահմանումը տրված է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքում (03.12.1996թ.): Սույն օրենքը սահմանում է, թե որ տեղեկությունը կարող է համարվել կամ չհամարվել որպես պետական կամ ծառայողական գաղտնիք (հոդված 10): Պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ չեն կարող դասակարգվել՝ ա) տեղեկատվություն քաղաքացիների անվտանգությանը կամ առողջությանը սպառնացող աղետների, ինչպես նաև բնական աղետների (այդ թվում՝ պաշտոնապես կանխատեսվողների) և դրանց հետևանքների մասին, բ) տեղեկատվություն ընդհանուր տնտեսական իրավիճակի և շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, ներքին առևտրի և մշակույթի բնագավառներում փաստացի իրավիճակն արտացոլող տեղեկատվություն, գ)

տեղեկատվություն քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, իրավախախտումների և սոցիոլոգիական հետազոտության արդյունքների մասին, դ) տեղեկություններ, որոնց պետական կամ ծառայողական գաղտնիք որակելը կարող է բացասական հետևանքներ ունենալ սոցիալ-տնտեսական, գիտական, տեխնիկական և հոգևոր և մշակութային զարգացման պետական և տնտեսական ծրագրերի իրականացման համար:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՇՄԱԳՓ) օրենքը (20.11.1995թ., նոր խմբագրությունը՝ 03.05.2023թ.) սահմանում է փորձաքննության գործընթացում օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու պահանջը: ՀՀ օրենսդրությունը «առևտրային գաղտնիք» հասկացության հստակ սահմանում չի տալիս, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանափակվում է հետևյալ ձևակերպմամբ՝ «Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար»: Նման ձեւակերպումը գործնականում ոչ միանշանակ է մեկնաբանվում (Հոդված 141):
«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ կետը (23.09.2003թ.) սահմանում է, որ եթե տեղեկատվության տնօրինողը չունի պահանջվող տեղեկատվությունը կամ դրա տրամադրումը դուրս է իր լիազորությունների շրջանակից, ապա նա պարտավոր է գրավոր ծանուցել դիմողին այս գրավոր հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում և, հնարավորության դեպքում, տրամադրել նրան նաև տվյալներին տիրապետողի վերաբերյալ տեղեկատվություն (ներառյալ արխիվը): Եթե տեղեկատվության սեփականատերը չունի պահանջվող տեղեկատվության վերաբերյալ բոլոր տվյալները, ապա նա դիմումատուին տրամադրում է տվյալների հասանելի մասը և, հնարավորության դեպքում, գրավոր հարցմանն ի պատասխան նշում է նաև այդ տեղեկատվությանը տիրապետողի գտնվելու վայրը (ներառյալ արխիվը), ով ունի պահանջվող տեղեկատվության վերաբերյալ այլ տվյալներ (9-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետեր) Հոդված 4, կետ 7, տե՛ս կետ 2 ժամկետների վերաբերյալ 4-րդ հոդվածի 8-րդ կետ:
Համաձայն «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» օրենքի 21-րդ հոդվածի (07.02.2001թ.) անվճար տրամադրվում է հետևյալ տեղեկատվությունը՝ ա) վտանգավոր և անբարենպաստ հիդրոօդերևութաբանական կամ հելիոերկրաֆիզիկական երևույթների կանխատեսումների և ահազանգումների վերաբերյալ հույժ շտապ և ընդհանուր նշանակության տեղեկատվությունը, որի ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը, բ) պետական մարմինների ապահովման համար նախատեսված տվյալները և տեղեկատվական արտադրանքը, գ) հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների վերաբերյալ տեղեկատվության առկայության և դրանց տրամադրման պայմանների մասին տվյալները: Հիդրոօդերևութաբանական երևույթների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության հատկացման, պատճենահանման, փոստով կամ այլ միջոցներով ուղարկելու հետ կապված ծառայությունների մատուցման համար գանձվում է վճար: ՀՀ կառավարության

2004 թվականի մարտի 18-ի թիվ 349 որոշումը (փոփոխվել է 08.05.2024թ.[20]) պարունակում է հիդրոօդերեւութաբանական երևույթների և գործընթացների վերաբերյալ հրատապ, ինչպես նաև ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հիդրոօդերեւութաբանական տեղեկությունների ցանկ: Ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակում և օգտատերերին հասանելի է դարձնում եռամսյակային, կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվությունները, վիճակագրական ձեռնարկները և տարեգրքերը, տարեկան բնապահպանական վիճակագրական ամփոփագիրը, որոնք հասանելի են www.armstat.am կայքում: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի (07.02.2001) համաձայն, վճար չի գանձվում հետևյալ դեպքերում. (ա) բանավոր հարցումին ի պատասխան, բ) մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս, գ) տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս: Կեղծ կամ թերի տեղեկատվություն տրամադրած գերատեսչությունը կամ կազմակերպությունը պարտավոր է հայտատուի գրավոր հարցման հիման վրա օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել տեղեկատվություն՝ ճշգրտված տվյալներով: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն տրամադրում է տեղեկատվություն անշարժ գույքի, այդ թվում՝ հողամասերի վերաբերյալ՝ վճարովի:
Համաշխարհային բանկի և ՀՀ արդարադատության նախարարության նախաձեռնությամբ 2005 թվականից առցանց գործում է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգը (www.arlis.am), որն անվճար է և թարմացվում շաբաթական պարբերականությամբ: Էլեկտրոնային միջոցներից բացի հրապարակվում են նաև Պաշտոնական տեղեկագիրը և Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիրը, որոնցում հրապարակվում են ՀՀ օրենքները և այլ կարգավորող իրավական ակտերը: Երևանի քաղաքապետարանում և 12 վարչական շրջաններում քաղաքացիների դիմումներն ու հարցումներն ընդունվում են «մեկ պատուհան» համակարգի, www.yerevan.am կայքի, սոցիալական ցանցերի և «թեժ գծի» միջոցով: Պատասխանները տրվում են նշված ժամկետներում: Բնապահպանության նախարարի 21.01.2005թ. թիվ 17 հրամանով հաստատվել են «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի (Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) իրավասության ներքո) տեղեկատվության տրամադրման համար գանձվող վճարների դրույքաչափերը: Այս հրամանն ուժը կորցրել է 2016 թվականի սեպտեմբերի 25-ին[21]: 2020 թվականի հունիսի 15-ի ՏԿԵՆ նախարարի 40-Լ հրամանով սահմանվել է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ»-ի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող գումարի առավելագույն չափը[22]:

8. 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 4-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի

[20] https://www.arlis.am/documentview.aspx?docid=192636
[21] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=23046
[22] https://api.mtad.am//storage/images/legal-acts/62174f8bc832d-655.pdf

դրույթների իրագործման ժամանակ:

Պետական մարմինները միշտ չէ, որ նշում են պահանջվող տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմնական պատճառը: Շատ հազվադեպ դեպքերում նրանք չեն պահպանում ժամկետները կամ ընդհանրապես չեն պատասխանում հարցումին, ինչն էլ պատճառ է հանդիսանում բողոքների և դատարան դիմելու համար: Անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ և հասնել պետական, առևտրային և ոչ կառավարական մեխանիզմների համաչափ զարգացման, որոնք ապահովում են նմանատիպ տեղեկատվության պատրաստումը: Երբեմն պահանջվող տեղեկատվության ծավալն այնքան մեծ է լինում, որ պահանջում է մի քանի մասնագետների մի քանի օրվա համատեղ աշխատանք: Վիճակագրական գրառումներ են կատարվում բավարարված կամ մերժված հայտերի քանակի վերաբերյալ: Հաճախ նախատեսված ժամկետներում տեղեկատվություն չտրամադրելը կամ պատասխանը չտրամադրելը պայմանավորված է հարցի ոչ ճիշտ ձևակերպմամբ: Որոշ դեպքերում պաշտոնյաները հստակ չեն պատկերացնում Օրհուսի Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ կետին համահունչ բնապահպանական տեղեկատվության բովանդակությունը: Սա երբեմն հիմք է հանդիսանում բնապահպանական տեղեկատվություն տրամադրելուց հրաժարվելու համար:

Տեղեկատվության մատչելիություն՝ բնապահպանական տեղեկատվություն և իրազեկում
Ֆոկուս խմբի քննարկման արդյունքում վերհանվել են հետևյալ հիմնախնդիրները.

- ՇՄԱԳ գործընթացում ներկայացվող տեղեկատվությունը հաճախ թերի է, ինչը սահմանափակում է հանրային հիմնավոր դիրքորոշում ձևավորելու հնարավորությունը:
- Օրհուս կենտրոնների կարգավիճակի իրավական անորոշությունը խոչընդոտում է ինստիտուցիոնալ կայունությանն ու հանրային ներգրավվածությանը:
- Շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրության մասին տեղեկացվածության մակարդակը ցածր է, հատկապես՝ փոքր համայնքներում:
- Տեղեկատվության տարածման ընտրովի մոտեցումները խաթարում են հավասարության և թափանցիկության սկզբունքները:
- Մեդիաանգրագիտության պակասը նպաստում է ապատեղեկատվության տարածմանը:
- Քաղաքացիների ու ՀԿ-ների հարցումներին պետական մարմինների պատասխանները հաճախ թերի կամ ոչ հիմնավոր:
- Պաշտոնական կայքերում տեղեկատվությունը ոչ ամբողջական է, հաճախ՝ անկանոն:
- Չկան բաժանորդագրման գործիքներ՝ բնապահպանական նորություններին և օրենսդրական փոփոխություններին հասանելի լինելու համար:
- Տվյալների պաշտպանության պակասը կարող է վտանգել որոշումների կայացման գործընթացը:
- Համայնքներում բացակայում են թվային արագ արձագանքման գործիքներ (SMS, Telegram և այլն):
- ՏԻՄ-երը չունեն բավարար կարողություններ և գործիքներ՝ արդյունավետ իրազեկում իրականացնելու համար:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետի համաձայն վեկտորային ձևաչափով կադաստրային սխեմաների և քարտեզների տրամադրման վճարը մեկ համայնքի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի) յուրաքանչյուր թեմատիկ շերտում (տվյալների համախմբում) ընդգրկված տեղեկատվության համար կազմում է 5000 դրամ, անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի (հողամասի) համար՝ 100 դրամ :

9. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն 4-րդ հոդվածի տեղեկատվության մատչելիության վերաբերյալ դրույթների իրացման վերաբերյալ, օրինակ՝ կան արդյոք վիճակագրական տվյալներ ներկայացված հարցումների և մերժումների քանակի, ինչպես նաև մերժման հիմքերի վերաբերյալ:

ՇՄՆ-ն տարեկան վիճակագրություն է վարում, թե քանի ֆիզիկական և իրավաբանական անձինք են դիմել նախարարություն[23]: Պատասխան տրվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց բոլոր դիմումներին, հարցի լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության դեպքում, դիմողին ծանուցվում է հարցը իրավասու մարմնին փոխանցելու կամ օրենքով սահմանված լրացուցիչ ժամկետի (30 օր) անհրաժեշտության մասին:

Շարունակվում են աշխատանքները Օրհուս կենտրոնի և ՀԿ-ների միջև բնապահպանական տեղեկատվության փոխանակման և տարածման բարելավման ուղղությամբ՝ ավելի մատչելի դարձնելով տեղեկատվությունը հանրությանը: Տեղեկատվությունը տարածվում է «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի Օրհուս կենտրոնի էջի և էլեկտրոնային փոստերի ցանցի միջոցով, որի մեջ ներառված են բնապահպանական ՀԿ-ները, քաղաքացիական նախաձեռնությունների անդամները, այլ հետաքրքրված քաղաքացիներ:

Ֆոկուս խմբային քննարկման մասնակիցները նաև դրական տեղաշարժ են տեսնում, օրինակ, «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ը 2023 թվականին մշակել և վերջերս գործարկել է Armhydromet բջջային հավելվածը, որն արդեն հասանելի է App Store-ում և Google Play-ում: Հավելվածի միջոցով հնարավոր է ստանալ հուսալի և իրական ժամանակին մոտ տեղեկատվություն՝ ինչպես եղանակային պայմանների, այնպես էլ օդի որակի վերաբերյալ:

Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությանն առավել հասանելիություն ապահովելու

[23] 2018թ.՝ 2080 դիմում քաղաքացիներից և իրավաբանական անձանցից, որոնցից 1565՝ էլեկտրոնային եղանակով, 515՝ փաստաթղթային
2019թ.՝ 2970 դիմում, որոնցից 2365՝ էլեկտրոնային, 605՝ փաստաթղթային
2020թ.՝ 570 դիմում բոլորը էլեկտրոնային՝ պայմանավորված համավարակով:
2024թ.՝ 450 հարցում, բավարարվել է՝ 418-ը, մերժվել՝ 8-ը, մասնակի պատասխանվել է 9-ին, վերահասցեագրվել է 15-ը. http://env.am/storage/files/report-statitics-2025.pdf:

համար ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցներն առաջարկում են.

- Ներդնել տեղեկատվության ներկայացման միասնական ձևաչափեր, ամբողջացնել պետական կայքերում նյութերի բովանդակությունը:
- Հաստատել Օրհուս կենտրոնների իրավական կարգավիճակը:
- Զարգացնել հանրային իրազեկման արշավներ համայնքներում:
- Տեղեկատվության տարածման գործելակերպում ապահովել հավասարություն բոլոր շահառուների համար:
- Աջակցել մեդիանգրագիտության զարգացման ծրագրերին՝ հատկապես երիտասարդության շրջանում:
- Կատարել հարցումների պատասխանի ընթացակարգերի կարգավորում՝ հստակ ժամկետներով և հիմնավորվածությամբ:
- Ներդնել բաժանորդագրման գործիքներ՝ տեղեկատվության տարածման նպատակով:
- Ապահովել տվյալների պաշտպանվածության իրավական և տեխնիկական միջոցառումները:
- Զարգացնել համայնքներում թվային գործիքների ներդրման ծրագրեր:
- Իրականացնելամայնքներում թվային գործիքների ներդրման ծրատրաստումների և մեթոդական ձեռնարկների միջոցով:

Հարկ է նշել, որ ՇՄՆ պաշտոնական կայքը և տեղեկատվական պաշտոնական մյուս խողովակները ներկայում վերափոխման փուլում են և թվարկված առաջարկների մի մասն արդեն իսկ հաշվի են առնվել և դրանց ներդրման ուղղությամբ աշխատանք է տարվում:

10. 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ

Նշեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան:

Год: ***2018-2020***

www.env.am,www.nature-ic.am, www.gov.am., www.armstat.am, www.arlis.am, www.laws.am, www.parliament.am, www.e-gov.am, , www.yerevan.am, https://arcanc.yerevan.am/, http://armmonitoring.am/#monitoring, www.meteomonitoring.am , www.mtad.am, www.minenergy.am, www.eiti.am

11. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

Թվարկեք օրենսդրական և կարգավորող այլ միջոցները՝ ուղղված էկոլոգիական տեղեկատվության հավաքման և տարածման վերաբերյալ 5-րդ հոդվածի դրույթների իրագործմանը:

Պարզաբանեք, թե ինչ կերպ են իրագործվում 5-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթները: Ներկայացրեք 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումների և 3-րդ հոդվածի

9-րդ կետի՝ խտրականություն չկիրառելու վերաբերյալ պահանջի արտացոլումը (ազգային օրենսդրության մեջ): Բացի այդ, նշեք մասնավորապես հետևյալը՝

*ա) **1-ին կետի** մասով՝ ձեռնարկված միջոցներն ապահովելու համար, որպեսզի՝*
(i) պետական մարմինները տնօրինեն և թարմացնեն էկոլոգիական տեղեկատվությունը,
(ii) ապահովվի տեղեկատվության պատշաճ հոսքը դեպի պետական մարմիններ,
(iii) արտակարգ իրավիճակներում համապատասխան տեղեկատվությունը տարածվի անմիջապես և անհապաղ:

*բ) **2-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները՝ ուղղված պետական մարմինների կողմից էկոլոգիական տեղեկատվությունը հասարակայնությանը մատչելի դարձնելու եղանակների թափանցիկության և էկոլոգիական տեղեկատվության մատչելիության բարելավմանը:*

*գ) **3-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները՝ ուղղված հանրային հեռահաղորդակցության ցանցերի միջոցով հասարակայնության համար դյուրամատչելի էլեկտրոնային տվյալների բազաներում էկոլոգիական տեղեկատվության ծավալի աստիճանական ավելացմանը:*

*դ) **4-րդ կետի** մասով՝ շրջակա միջավայրի վիճակի մասին ազգային զեկուցների հրատարակման և տարածման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:*

*ե) **5-րդ կետում** հիշատակված տեղեկատվության տարածման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:*

*զ) **6-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները՝ ուղղված խրախուսելու շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն ունեցող օպերատորներին, որպեսզի վերջիններս հասարակայնությանը պարբերաբար տեղեկացնեն իրենց գործունեության և արտադրանքի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ:*

*է) **7-րդ կետի** համաձայն պահանջվող տեղեկատվության տրամադրման և հրապարակման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:*

*ը) **8-րդ կետի** մասով՝ հասարակությանն արտադրատեսակների մասին բավարար տեղեկատվության տրամադրման մեխանիզմների մշակման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:*

*թ) **9-րդ կետի** մասով՝ աղտոտիչների կադաստրների կամ ռեգիստրների ազգային համակարգի ստեղծման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:*

ա) 1-ին պարբերության առնչությամբ՝ ձեռնարկված միջոցները՝ ապահովելու համար, որ. i) պետական մարմինները փիրապետեն բնապահպանական տեղեկատվությանը և թարմացնեն այն, (ii) երաշխավորվել է տեղեկատվության պատշաճ հոսքը պետական մարմիններ. (iii) արտակարգ իրավիճակների դեպքում համապատասխան տեղեկատվությունն անհապաղ և առանց հետաձգման տարածվում է:

Օրհուսի կոնվենցիայի դրույթներն ուղղակիորեն կիրառվում են բնապահպանական տեղեկատվության հոսքի կառավարման ոլորտում: Մասնավորապես, դրանք արտացոլված են ղեկավար մարմինների կանոնադրություններում՝ նպատակ ունենալով վերացնել սահմանափակումները տեղեկատվության հավաքագրման և տրամադրման գործընթացում:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (02.12.1998թ.) բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումների շարքում նախատեսում է բնակչությանը դրա առաջացման վտանգի կամ հնարավորության մասին իրազեկելու պահանջը:

Համաձայն ՀՀ Ջրային օրենսգրքի 20-րդ հոդվածի (04.06.2002թ.) հանրային իրազեկումը և մասնակցությունը կարգավորող պետական կառավարման լիազորված մարմինը պարտավոր է հանրությանը տեղեկացնել հետևյալի մասին.

- ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների նախագիծը.
- ջրի ազգային ծրագրի նախագիծը.
- ջրավազանային կառավարման պլանների նախագծերը.
- ջրօգտագործման քննարկվող թույլտվությունները.
- ջրային համակարգերին օգտագործման տրվելիք թույլտվությունները.
- ջրերի ստանդարտների նախագծերը.
- ջրերի սակագնային ռազմավարության նախագիծը:

2023 թվականի մարտի 7-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերի հրապարակային ծանուցման և հրապարակման կարգը հաստատելու մասին» N 217 որոշումը: 2025 թվականի մարտի 6-ին որոշման մեջ փոփոխություն է կատարվել, որով հստակեցվել է, որ *«Ծանուցման համար կարող են տեղեկատվության միջոց ծառայել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքը՝ www.env.am, և www.azdarar.am կայքը:»*[24]:

«Հիդրոօդերեւութաբանական գործունեության մասին» օրենքի 21-րդ հոդվածը սահմանում է հիդրոօդերեւութաբանական երևույթների և գործընթացների վերաբերյալ հրատապ տեղեկատվության հասկացությունը՝ բնական երևույթների և շրջակա միջավայրի աղտոտվածության վտանգավոր մակարդակների մասին փաստացի և կանխատեսված տեղեկատվություն, որը սահմանված կարգով հաղորդվում է ստանալուց և մշակելուց անմիջապես հետո: Հիդրոօդերևութաբանական գործունեության հիմնական սկզբունքներն են հիդրոօդերևութաբանական երևույթների փաստացի և սպասվող փոփոխությունների վերաբերյալ տվյալների առկայությունը, տեղեկատվության հրապարակայնությունը, հուսալիությունը և արդյունավետ օգտագործումը: Ավելին, օրենքը սահմանում է հիդրոօդերևութաբանական երևույթների մասին հավաստի տեղեկատվություն ստանալու քաղաքացիների, ՀԿ-ների և այլ իրավաբանական անձանց իրավունքը, ինչպես նաև հիդրոօդերևութաբանական երևույթների անկախ դիտարկումներ իրականացնելու քաղաքացիների և ՀԿ միավորումների իրավունքը՝ միաժամանակ պետական լիազոր մարմնին

[24] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=203811

տեղեկացնելով բնական աղետների, դժբախտ պատահարների և շրջակա միջավայրի վրա ազդող տեխնոլոգիական գործընթացների և շրջակա միջավայրի աղտոտվածության մասին (հոդված 8):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ 1) «Տեղեկատվության տիրապետողը հրապարակում է տեղեկատվության տրամադրման կարգը, անհապաղ հրապարակում կամ այլ կերպ հատուկ տեղեկացնում հանրությանը, եթե տեղեկատվության հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրային առողջության և իրավունքների, երրորդ անձանց իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի կամ սեփականության սպառնալիքները:

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին»ՀՀ օրենքի հոդված 29-ի (27.11.2006թ.) լիազորված պետական մարմինը օրենքով սահմանված կարգով տրամադրում է տեղեկատվություն՝ 1.ա) բնության հատուկ պահպանվող տարածքում նախատեսվող գործունեության մասին, բ) բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանության և օգտագործման վերաբերյալ որոշումների մասին, գ) բնության հատուկ պահպանվող տարածքների էկոլոգիական իրավիճակի մասին:

Ինչ վերաբերում է 3-րդ հոդվածի 9-րդ կետին և 2-րդ հոդվածի Կոնվենցիայի սահմանումներին համապատասխան խտրականության բացառման պահանջներին, տես 4-րդ հոդվածի 4-րդ կետի վերաբերյալ տեղեկատվությունը:

Կոնվենցիայի իրականացման նպատակով (այս գործընթացն իրականացվում է մշտական հիմունքներով, Հոդված 4 և 5-ին համապատասխան տեղեկատվությունը հավաքագրվում և պահպանվում է ՇՄՆ տեղեկատվական ֆոնդերում և տրամադրվում հանրությանը վերջինիս պահանջով, ինչպես նաև նախարարության կայքի միջոցով (www.env.am): Նախարարության պաշտոնական կայքը գործում է 2001 թվականից: Նախարարության կայքը զգալիորեն թարմացվել է 2006 թվականին՝ Կոնվենցիայի պահանջներին համապատասխան: Ներկայում, 2025 թվականի ապրիլի 15-ի դրությամբ, կայքն ունի 7 մենյու՝ իր 35 ենթամենյուներով, որոնք վերաբերում են փորձաքննությանը, լիցենզիաներին և թույլտվություններին, միջազգային համագործակցությանը, ՀԿ-ների հետ համագործակցությանը, ստուգումներին և պետ գնումներին, տեղադրված են վիճակագրական, եռամսյակային հաշվետվության ձևերը և դրանց լրացման հրահանգները, ԲՀՊՏ-ներ, հղումներ, գրադարան, տեսադարան, տեսանյութեր, նորություններ և հայտարարություններ, ինչպես նաև առանձին բաժին նախատեսվող հասարակական լսումների վերաբերյալ: Կայքը ներառում է նաև «Օրենսդրություն» բաժինը, որտեղ հրապարակվում են նաև իրավական ակտերի նախագծերը: Նախարարության կայքը համապատասխանում է Կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1521-Ն Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին որոշման պահանջներին[25]: Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության հետ համատեղ մշակել ենք ՇՄՆ կայքի նոր տարբերակը, համաձայն կառավարության 14 հունիսի 2024 թվականի N 884-Լ որոշման («ԱՄՊԱՅԻՆՆ ԱՌԱՋԻՆԸ» քաղաքականության

[25] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=88785

մշակման և ներդրման մասին): Կայքը տեղեկայված է «Ամազոն»-ի ամպային տիրույթում: Կայքը ամբողջովին համապատասխանում է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից մշակված թվայնացման սկզբունքներին, ինչպես նաև մատչելիության WCAG 2.1 AA ստանդարտին: Մեծ աշխատանք է տարվել ծառայությունների բովանդակության բարելավման ուղղությամբ: Ներկայումս կատարում ենք կայքում բովանդակության տեղադրում: Նոր կայքը հասանելի կլինի առաջիկա մեկ ամսում:

ՇՄՆ կայքում տեղադրված տեղեկատվությունը ակտիվորեն տարածվում է նաև ՇՄՆ սոցիալական ցանցերի էջերով[26], ինչպես նաև Երևանի Օրհուս կենտրոնի կողմից:

Օրենսդրական միջոցառումներ

- -20.02.2019թ. տրվել է թիվ 1 պաշտոնական մեկնաբանություն ՇՄԱԳՓ օրենքի 16 հոդվածի վերաբերյալ;
- 04.09.2019թ. տրվել է թիվ 2 պաշտոնական մեկնաբանություն ՇՄԱԳՓ օրենքի հետ կապված:

Բացի այդ, ՀՀ ՇՄՆ-ն մշակել է ՇՄԱԳՓ մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծ, ինչպես նաև կառավարության որոշման նախագիծ՝ ի կատարումն վարչապետի 01.06.2019թ. թիվ 666-Լ որոշման: 2023 թվականի մայիսի 3-ին ԱԺ-ն հաստատել է ՇՄԱԳՓ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը: 2023 թվականի դեկտեմբերի 28-ին ՀՀ կառավարությունն ընդունել է N 2343-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»27: Սահմանվել են օրենքի փոփոխությունից բխող ՇՄԱԳ և Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) գործընթացներում հանրային լսումների ընթացակարգը, շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները:

Բնապահպանական տեղեկատվության պատշաճ հոսքը և դրա թարմացումն ապահովում են Երևանի քաղաքապետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը և բնապահպանության վարչությունը: Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի խմբագրությունը մշակում է ստացված տեղեկատվությունը և հրապարակում է կայքի համապատասխան բաժիններում և պաշտոնական լրահոսում:

Հայաստանում արտակարգ իրավիճակների մասին տեղեկատվությունը տարածում են ՇՄՆ-ը, Ներքին գործերի նախարարությունը, որի կազմում է նաև Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը, Առողջապահության նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, ՏԿԵՆ-ը, Երևանի և այլ համայնքների աշխատակազմերը, Ջրային տնտեսության պետական

---

26 https://www.facebook.com/mnparmenia/?locale=hy_AM ; youtube

27 https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=188064

կոմիտեն՝ օգտագործելով հասանելի բոլոր լրատվամիջոցները: Նման տեղեկատվությունը կարող է պարունակել, մասնավորապես, անվտանգության միջոցների ընդունման վերաբերյալ առաջարկություններ, վտանգավոր իրավիճակի կանխատեսվող զարգացման մասին տեղեկատվություն, հետազոտության արդյունքներ, վտանգավոր իրավիճակի հետևանքների վերացման միջոցառումների կամ դրանց կանխարգելման միջոցառումների մասին հաշվետվություններ և այլ տվյալներ:

Պետական մարմիններում վարչական վիճակագրական ռեգիստրների ստեղծման և վարման նպատակով տեղեկատվության հավաքագրման, տրամադրման և հրապարակման լիազորությունները նախատեսված են «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքով (28.04.2000թ.) (հոդված 17) և ՀՀ վիճակագրական պետական խորհրդի կողմից հաստատված մի շարք կանոնակարգերով: Տեղեկատվության հավաքագրման և փոխանակման բովանդակությունը, մեխանիզմներն ու եղանակները նախատեսված են վիճակագրական աշխատանքների կատարման տարեկան ծրագրով, որը բաց քննարկումից հետո հաստատվում է Խորհրդի կողմից և ստանում նորմատիվ ակտի կարգավիճակ: Բնապահպանական տեղեկատվության ամբողջականությունն ու միջազգային համադրելիությունն ապահովելու և սպառողներին տեղեկատվության տրամադրման ժամանակին (արդյունավետությունը) բարձրացնելու նպատակով շարունակվում են աշխատանքները համապարփակ տվյալների բազաների ստեղծման ուղղությամբ: Եվրոպական հարևանության քաղաքականության (ENPI) և համագործակցության գործիքների շրջանակներում Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ նախագիծը նպատակ ունի ձևավորել շրջակա միջավայրի տեղեկատվական համակարգեր՝ համաձայն ENPI-SEIS սկզբունքների, դրանց կառավարումը միասնական մեթոդների, բովանդակության մշակման և ենթակառուցվածքների և այլ բաղադրիչների միջոցով: Արդյունքում, ստացված վիճակագրական տեղեկատվական բազաները կպարունակեն ԵՄ բնապահպանական և վիճակագրական ստորաբաժանումների կողմից մշակված ցուցիչներ, ինչպես նաև ազգային մակարդակով ընդունված ցուցանիշներ: Այդ աշխատանքներին մասնակցում են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պատասխանատու մասնագետներ:

Բացի այդ, «Տեղեկատվության ազատության մասին» (23.09.2003թ.) օրենքը (հոդված 7) սահմանում է, որ.

ա) Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում և հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

բ) Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը: Բնապահպանական տեղեկատվության պատշաճ հոսքի ապահովման և դրա թարմացման առումով մեծ նշանակություն ունի «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» ՀՀ

օրենքը (09.04.2007թ.)՝ որի հոդված 3-ի համաձայն «*1. Օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված այն դեպքերում, երբ նախատեսվում է հրապարակային ծանուցում՝ տեղեկատվությունը մամուլում հրապարակելու միջոցով, հրապարակային ծանուցումը պետք է տեղադրվի նաև կայքում*»:

Կառավարության 30.08.2007 N1044 որոշմամբ հաստատվել է ԲՀՊՏ-ների մոնիթորինգի կարգը, որի 18-րդ և 19-րդ կետերի համաձայն՝ «Լիազորված պետական մարմինն ապահովում է մոնիթորինգի տվյալների մուտքագրումը, դասակարգումը, վերլուծությունը, պարբերական թարմացումը և հասարակայնության համար տեղեկատվության մատչելիությունը: Մուտքագրված տվյալները վերլուծվում և գնահատվում են մուտքագրման օրվանից մինչև 20 օրվա ընթացքում, որից հետո տեղադրվում են համապատասխան ինտենետային կայքում[28]:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի (հոդված 25) նախատեսվում է, որ

1. նորմատիվ իրավական ակտի պաշտոնական հրապարակումն իրականացվում է նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում (այսուհետ՝ միասնական կայք) հրապարակելումիջոցով, [29]:

2. Պաշտոնական հրապարակման օրը ակտի վերջնական խմբագրությամբ ընդունված կամ ստորագրված, հրապարակման ենթակա ամբողջական տեքստն առաջին անգամ միասնական կայքում հրապարակելու օրն է:

3. Նախարարությունը պարտավոր է երկու աշխատանքային օրվա ընթացքում ապահովել նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմնի կողմից՝ սահմանված կարգով ներկայացված նորմատիվ իրավական ակտերի միասնական կայքում հրապարակելը, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիան:

4. Պաշտոնական հրապարակումն իրականացվում է այն տեսքով, ինչ տեսքով դրանք ուղարկվել են հրապարակման: Այլ անձանց կամ մարմիններին արգելվում է կատարել լեզվաոճական, խմբագրական, շարադասական կամ այլ բնույթի փոփոխություններ իրավաստեղծ մարմնի՝ վերջնական խմբագրությամբ ընդունած նորմատիվ իրավական ակտում, բացառությամբ ուղղագրական կամ կետադրական սխալների ուղղման, որոնց ուղղման դեպքում տեքստի բովանդակությունը չի փոխվում:

5. Եթե նորմատիվ իրավական ակտի հրապարակումից հետո դրա տեքստում հայտնաբերվում են վրիպակներ կամ տեխնիկական բնույթի այնպիսի սխալներ, որոնց ուղղման դեպքում տեքստի բովանդակությունը չի փոխվում, ապա նորմատիվ իրավական ակտը հրապարակման ուղարկած մարմնի դիմումով նախարարությունը նորմատիվ իրավական ակտի տեքստում իրականացնում է համապատասխան ուղղում՝

---

[28] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=135783

[29] e-draft.am, կայքը վարում է Արդարադատության նախարարությունը

կատարելով նշում՝ ուղղում կատարած լինելու վերաբերյալ:

6. Նորմատիվ իրավական ակտերն ընդունող մարմնի կողմից նորմատիվ իրավական ակտերը հրապարակման ներկայացնելու կարգը, միասնական կայքում դրանք հրապարակելու, դրանցում ուղղում կատարելու և պաշտոնական ինկորպորացիայի կարգը սահմանվում են արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարի հրամանով: (21.03.2018):

Հայաստանի կողմից ստորագրված միջազգային իրավական ակտերի մասին տեղեկատվությունը հասանելի է Արդարադատության նախարարության կայքում:

Հայաստանի կողմից ստորագրված միջազգային պայմանագրերի մասին տեղեկատվությունը հասանելի է նաև ԱԺ, ՇՄՆ և «Հայիիդրոմետ» ՊՈԱԿ-ի կայքի Օրհուս կենտրոն ենթաբաժնում:

ՇՄՆ 30.08.2013թ. N 195 հրամանով հաստատվել են «ՀՀ արգելավայրերի կառավարման ինստիտուցիոնալ կապերի ձևավորման մեթոդական ուղեցույցը և ՀՀ ԲՀՊՏ–ների կառավարման մոդելների ներդրման մեթոդական ուղեցույցը», որոնք պարունակում են հրահանգներ հանրության մասնակցության և տեղեկատվության հասանելիության վերաբերյալ: Այս բոլոր մեխանիզմները փորձարկվել են գործնականում. Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և հանրության համար կազմակերպվել են տարբեր վերապատրաստման դասընթացներ՝ Օրհուսի կոնվենցիայի դրույթներին ծանոթացնելու նպատակով: Հատուկ բաժին է հատկացված վերջնական որոշում կայացնելիս քաղաքացիների մեկնաբանությունները հաշվի առնելու մեխանիզմին:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի, 3-րդ կետի առնչությամբ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 505-Լ որոշմամբ հաստատվել է Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագիրը[30]: Որոշմամբ վեր են հանվել ՀՀ տնտեսության կառավարման մի շարք մարմինների կառավարման ներքո գտնվող օբյեկտների, գույքի և ռեսուրսների կադաստրների (ռեգիստրների) վարման խնդիրները: Արձանագրվել է, որ որոշ գործառույթները հիմնականում չեն իրականացվել կամ թերի են իրականացվել, գործում են միմյանցից անկախ, տվյալները կրկնվում են, երբեմն լինում են իրարամերժ, որն էականորեն դժվարացնում է կառավարման մարմիններին անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու գործընթացը, իսկ երբեմն անհնար է դարձնում տարբեր տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության կամ տեղեկատվական համակարգերի օգտագործումը՝ կառավարման արդյունավետության, արդյունավետ ծրագրերի մշակման կամ պետական նշանակության ծրագրերի արդյունավետ իրագործման համար: Կարգավորվել են տարածական տվյալների օգտագործման հարցերը:

---

[30] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=151578

Որոշմամբ նախատեսված է ոլորտային կադաստրների վարում, այդ թվում շրջակա միջավայրին առնչվող՝ Ոլորտային (թեմատիկ) կադաստրների վարում

1) Անտառային կադաստր «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջոցով:

2) Ջրային ռեսուրսների պետական կադաստր ՇՄՆ Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության միջոցով:

3) ԲՀՊՏ-ների կադաստր ՇՄՆ համապատասխան ստորաբաժանման միջոցով

4) Բուսական աշխարհի կադաստր

5) Կենդանական աշխարհի կադաստր

6) Թափոնների պետական կադաստր ՇՄՆ համապատասխան ստորաբաժանման միջոցով

7) Օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների պետական կադաստր

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի, 6-րդ կետի առնչությամբ. Հայաստանի օրենսդրությամբ չի նախատեսվում որևէ հատուկ միջոցի ընդունում՝ խրախուսելու այն գործարարներին, որոնց գործունեությունը էական ներգործություն ունի շրջակա միջավայրի վրա, և նրանք կանոնավոր կերպով հասարակությանը տեղեկացնում են իրենց գործողությունների և արտադրատեսակների շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության մասին: Ջրային օրենսգրքով[31], օրինակ, ոախատեսված է արտոնություն ջրօգտագործումից հետո հեռացվող ջրային ռեսուրսների կրկնակի (երկրորդային) ջրօգտագործումն ապահովելու համար համապատասխան ենթակառուցվածքներ ստեղծելու և կրկնակի (երկրորդային) ջրօգտագործում իրականացվելու դեպքում ջրային ռեսուրսից ջրառ իրականացնող անձի համար: Սակայն այս դրույթը դեռևս չի գործում, քանի որ մշակման փուլում են ապահովող իրավակարգավորումները, մասնավորապես ՀՀ հարկային օրենսգրքով պետք է նախատեսվեն բնօգտագործման վճարների հաշվարկման արտոնությունների սահմանման նորմերը: Կրկնակի (երկրորդային) ջրօգտագործողի համար կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման տրված ջրային ռեսուրսների նկատմամբ բնօգտագործման վճար չի հաշվարկվում (Հոդված 25.1):

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 7-րդ կետի առնչությամբ. ՀՀ ՇՄՆ-ն հրապարակում է կենսաբազմազանության, անտառների պահպանության, անապատացման և բնապահպանական այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն և վերլուծական ուսումնասիրություններ: Անտառների մասին տեղեկատվությունը տարածում է նաև ՇՄՆ կազմում գործող «Հայանտառ» կազմակերպությունը (https://armforest.am/):

Պետական մարմինները ՀԿ-ների և գիտության ներկայացուցիչների հետ պարբերաբար կազմակերպում են կլոր սեղան-հանդիպումներ, սեմինարներ, մամուլի ասուլիսներ և հանրային լսումներ օրենքների նախագծերի, շրջակա միջավայրի և բնապահպանության հարցերի շուրջ:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի, 8-րդ կետի առնչությամբ. Սննդի արդյունաբերության հետ կապված տեղեկատվական հարցերով զբաղվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և, մասնավորապես, դրա կառուցվածքի մաս կազմող Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմինը (https://www.armstandard.am/): Բազմաթիվ առևտրային

[31] ՀՀ Ջրային օրենսգիրք (հայերեն) https://www.arlis.am/documentview.aspx?docid=166600

կազմակերպություններ ստացել են նաև ապրանքների միջազգային հավաստագրման իրավունք, օրինակ, դեղագործական և բժշկական տեխնոլոգիաներով զբաղվող կազմակերպություններ: Այս ոլորտում կարևոր դեր է խաղում 2010 թվականին ստեղծված Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը, որը 2018 թվականի ապրիլի 9-ին վերակազմավորվել է, իսկ 2019-ին վերանվանվել ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին (https://www.snund.am/en): Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (ԳՁՕ) մասով «Սննդամթերքի անվտանգության մասին» (27.11.2006թ.) օրենքում 2012 թվականին իրականացված փոփոխության համաձայն նախատեսված է ԳՁՕ-ների մակնշում, «*եթե սննդամթերքի բաղադրության մեջ դրա պարունակությունը 0,9 %-ից բարձր է*»: Քննարկվում են նաև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում (26.06.2001) փոփոխությունները և լրացումները: 2023 թվականի հունվարի 17-ին ընդունվել է և 2023 թվականի օգոստոսի 10-ին ուժի մեջ է մտել Գենետիկորեն ձեվափոխված օրգանիզմների մասին ՀՀ օրենքը: Օրենքով կանոնակարգվել է ԳՁՕ-ների գործածությունը և ապահովվել կենսաանվտանգության հետ կապված հարաբերությունները՝ բացառելով դրանց հնարավոր անբարենպաստ ազդեցությունը շրջակա միջավայրի, մարդու առողջության, կենսաբազմազանության, գյուղատնտեսական նշանակության հողերի վրա: Օրենքի Հոդված 9-ով կարգավորվում են ԳՁՕ-ների գործածության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն ու հասարակության իրազեկումը: Ստորև ներկայացվում է վերոնշյալ հոդվածի համապատասխան կետերը.

3. Լիազոր մարմինը զանգվածային լրատվության միջոցներով հասարակությանը տեղեկացնում է ԳՁՕ-ների կամ դրանց համակցությունների գործածության հետևանքով առաջացող իրավիճակների կանխարգելմանն ուղղված միջոցառումների մասին:

4. ԳՁՕ-ների գործածության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի և ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված դրույթներով:

6. օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր ոք իրավունք ունի լիազոր մարմնից պահանջելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալու ԳՁՕ-ների գործածության վերաբերյալ գաղտնիք չհանդիսացող տեղեկատվություն: Գաղտնիք չեն համարվում ԳՁՕ-ների գործածության և կենսաանվտանգության հետ կապված՝

1) գործունեություն իրականացնող անձի վերաբերյալ տվյալները (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ գաղտնիք համարվող տեղեկատվության).

2) ԳՁՕ-ների ընդհանուր բնութագիրը.

3) գործածության նպատակը և վայրը.

4) կիրառվող մեկուսացման միջոցները.

5) շրջակա միջավայրի վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունը և մարդու առողջությանն սպառնացող հնարավոր վտանգը.

6) հնարավոր պատահարների դեպքում իրականացվելիք արտակարգ իրավիճակի պլանը.

7) հնարավոր անբարենպաստ ազդեցությունների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը:

7. Լիազոր մարմինը ԳՁՕ-ների գործածության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով զանգվածային լրատվության, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով, հասարակական լսումների կազմակերպման, պաշտոնական կայքի և ՀՀ օրենսդրությամբ

չարգելված այլ միջոցներով հասարակությանը տրամադրում է տեղեկատվություն՝

1) մշտադիտարկման արդյունքների,

2) լիցենզավորման,

3) արտակարգ իրավիճակի,

4) հանրության իրազեկման համար սույն օրենքով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ տվյալների մասին:

Վերջին տարիներին մի քանի ՀԿ-ներ ներգրավված են եղել էկոպիտակավորման կամավոր համակարգերի մշակման և ներդրման մեջ (օրինակ, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական արտադրանքի մակնշման համար ԷԿՈԳԼՈԲ ՀԿ-ն): ՀԿ-ները և գիտնականները բավականաչափ տեղեկացված են օրենքի նախագծի վերաբերյալ: Այն ներկայացվել է խորհրդարանական լսումների: Հաստատվել են կառավարության մի շարք որոշումներ[32].

- «Սննդամթերքի հետ շփվող նյութերին և դրանց հայերեն տեղեկատվության մակնշման ձեվերին և բովանդակությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը (25.10.2007, N1282),
- ՀՀ ներմուծվող սննդամթերքի և սննդային հավելումների հայերեն մակնշման տեղեկատվության ձևի պահանջները (21.12.2006թ., N1838)[33],
- Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշման եվ պիտակավորման կարգը (19.03.2009թ., N283),
- Օրգանական գյուղատնտեսության կազմակերպման, բույսերի և բուսական ծագման մթերքի, գյուղատնտեսական կենդանիների և անասնապահական ծագման մթերքի (ներառյալ մեղվաբուծական մթերքը) արտադրության, օրգանական եղանակով վերամշակման, փաթեթավորման, պահպանման, փոխադրման, իրացման և մակնշման կարգը (11.06.2009 թ., N662):

5-րդ հոդվածի 9-րդ կետ. ՀՀ-ն ակտիվորեն մասնակցել է Աղտտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրի մասին (ԱԱՏՌ) արձանագրության պատրաստման գործընթացին: 2003 թվականին Կիևի «Շրջակա միջավայրը Եվրոպայի համար» նախարարական համաժողովում Հայաստանը, 36 այլ երկրների հետ միասին, առաջիններից մեկն էր, որ ստորագրեց Օրհուսի կոնվենցիայի ԱԱՏՌ արձանագրությունը (PRTR): Հայաստանում արձանագրության վավերացման գործընթացն արագացնելու և ԱԱՏՌ-ների համար կարողություններ և մեթոդաբանություն ստեղծելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. Օրհուսի կոնվենցիայի քարտուղարության հետ համագործակցությամբ և ՇՄՆ նախարարի խնդրանքով՝ ՄԱԿ ԵՏՀ–ն ներգրավել է միջազգային փորձագետների, որոնք ուսումնասիրել են ՀՀ օրենսդրական շրջանակը և ինստիտուցիոնալ հարցերը և առաջնորդվելով օրինակելի փորձով՝ ներկայացրել

---

[32] Օրգանական գյուղատնտեսությանը վերաբերող որոշումների հղումների ցանկ

[33] ՀՀ կառավարության 21.12.2006թ. որոշում

ենառաջարկություններ անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների և ԱԱՏՌ համակարգի կառավարման հնարավոր մարմնի վերաբերյալ:

2. 2024 թվականի հուլիսին Կոնվենցիայի և ԱԱՏՌ արձանագրության քարտուղարության հետ համագործակցությամբ և Բնապահպանական ԾԻԳ-ի աջակցությամբ, հիբրիդային ձևաչափով, ՇՄՆ-ում անցկացվել է թեմատիկ քննարկում, որին մասնակցել են ՇՄՆ աշխատակիցները: Միջազգային փորձագետներն ու ԱԱՏՌ արձանագրության քարտուղարության շրջակա միջավայրի հարցերով պատասխանատու Քրիստոֆ Դուկոտը:

ԱԱՏՌ արձանագրության հիմնական դրույթները ներառվել են «Բնապահպանական օրենսդրության համապատասխանության ինքնահսկում իրականացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծում, չի ընդունվել: Այսուհանդերձ, նաև միջազգային փորձագետների գնահատմամբ ՀՀ օրենսդրությունը պարունակում է ԱԱՏՌ արձանագրությանը համահունչ բավարար հիմք:

12. 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԱԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 5-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթների իրագործման ժամանակ:

2018-2020 թվականներ

Կոնվենցիայով նախատեսված իրենց պարտականությունների մասին պետական պաշտոնյաների ոչ բավարար տեղեկացվածությունը:

13. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն էկոլոգիական տեղեկատվության հավաքմանը և տարածմանն առնչվող 5-րդ հոդվածի դրույթների իրացման վերաբերյալ, օրինակ՝ կան արդյոք վիճակագրական տվյալներ հրապարակվող տեղեկատվության վերաբերյալ:

Կարևորելով Օրհուս կենտրոնի (ների) դերը Կոնվենցիայի իրականացման գործում, և հատկապես շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և տարածման առումով՝ Հայաստանում Օրհուս կենտրոնների իրավական կարգավիճակի հստակեցման և կենտրոնների վերակտիվացման ուղղությամբ տեղի են ունեցել մի շարք գործողություններ[34]: ՇՄ նախարարի 2023 թվականի փետրվարի 6-ի հրամանով Օրհուս կենտրոնների ինստիտուցիոնալ իրավական նոր կարգավիճակի վերաբերյալ առաջարկի մշակման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ[35]: 2024 թվականին ձևավորվել է Երևանի Օրհուս կենտրոնի խորհուրդը, որի 5 անդամներից 3-ը հանրային ոլորտի ներկայացուցիչներ են, մյուս 2-ը՝ ՊՈԱԿ-ի տնօրենը և Կոնվենցիայի

[34] http://env.am/news/orhus-14-10-2022 ,
[35] http://env.am/news/orhus-27-07-2023

ազգային համակարգողը: Խորհրդը նախագահը ևս ՀԿ ներկայացուցիչ է: «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ կանոնադրությունում կատարվել է փոփոխություն, որով հստակեցվել են Օրհուս կենտրոնի գործառույթները, «Օրհուս կենտրոնը» դարձել է առանձին ստորաբաժանում:

14. 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ

Նշեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան:

www.aarhus.am, www.gov.am, www.env.am, www.nature-ic.am, , www.laws.am, www.parliament.am, www.mes.am, www.e-gov.am, www.acts.legalportal.am, www.mta.gov.am, www.arlis.am

15. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿՈՆԿՐԵՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ

Թվարկեք օրենսդրական և կարգավորող այլ միջոցները՝ ուղղված գործունեության կոնկրետ տեսակների վերաբերյալ հոդված 6-ի դրույթների իրագործմանը, որոնք վերաբերում են գործունեության կոնկրետ ձևերի վերաբերյալ որոշումների ընդունմանը հասարակայնության մասնակցությանը: *Պարզաբանեք, թե ինչ կերպ են իրագործվում 6-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթները: Ներկայացրեք 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումների և 3-րդ հոդվածի 9-րդ կետի՝ խտրականություն չկիրառելու վերաբերյալ պահանջի արտացոլումը (ազգային օրենսդրության մեջ): Բացի այդ, նշեք մասնավորապես հետևյալը՝* *ա) **1-ին կետի** մասով ձեռնարկված միջոցները, որոնք ապահովում են.* *(i) Կոնվենցիայի հավելված 1-ում նշված նախատեսվող գործունեության տեսակները թույլատրելու վերաբերյալ որոշումներ կայացնելիս 6-րդ հոդվածի դրույթների կիրառումը:* *(ii) Կոնվենցիայի հավելված 1-ում չնշված, բայց շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն ունեցող գործունեության տեսակները թույլատրելու վերաբերյալ որոշումներ կայացնելիս 6-րդ հոդվածի դրույթների կիրառումը:* *բ) շրջակա միջավայրին վերաբերող որոշումների ընդունման ընթացակարգի սկզբնական փուլում **2-րդ կետում** նշված հարցերի վերաբերյալ շահագրգիռ հասարակայնության ժամանակին, պատշաճ և արդյունավետ ձևով իրազեկումն ապահովելու համար ձեռնարկված միջոցները:*

*գ) ձեռնարկված միջոցները այն նպատակով, որպեսզի հասարակայնության մասնակցության ընթացակարգերի համար նախատեսված ժամկետները համապատասխանեն **3-րդ կետի** պահանջներին:*

*դ) **4-րդ կետի** մասով՝ վաղ փուլում հասարակայնության մասնակցությունն ապահովելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները:*

*ե) **5-րդ կետի** մասով՝ ապագա նախաձեռնողներին խրախուսելուն ուղղված միջոցները, որպեսզի նրանք նախքան թույլատվություն ստանալու հայտ ներկայացնելը որոշեն շահագրգիռ հասարակայնության շրջանակը, անցկացնեն քննարկումներ և տրամադրեն տեղեկատվություն իրենց հայտի նպատակների վերաբերյալ:*

*զ) **6-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցներն՝ ուղղված նրան, որպեսզի.*

1. *իրավասու պետական մարմինները շահագրգիռ հասարակայնությանը տրամադրեն 6-րդ հոդվածում նշված ողջ տեղեկատվությունը, որն առնչվում է որոշումների կայացմանը,*
2. *մասնավորապես, իրավասու մարմինները շահագրգիռ հասարակայնությանը տրամադրեն սույն կետում նշված տեղեկատվությունը:*

*է) **7-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները ապահովելու համար, որ հասարակայնության մասնակցության ընթացակարգերը հնարավորություն ընձեռեն հասարակայնությանը ներկայացնելու մեկնաբանություններ, տեղեկատվություն, վերլուծություն կամ կարծիքներ, որոնք վերաբերում են նախատեսվող գործունեությանը:*

*ը) **8-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցներն ապահովելու համար համապատասխան որոշման մեջ հասարակայնության մասնակցության արդյունքների՝ պատշաճ ձևով արտացոլումը:*

*թ) **9-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որպեսզի հասարակայնությունը, ըստ համապատասխան ընթացակարգերի, պատշաճ ձևով իրազեկվի որոշման մասին:*

*ժ) **10-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որպեսզի այն դեպքերում, երբ պետական մարմինը վերանայում կամ թարմացնում է 1-ին կետում նշված գործունեության իրականացման պայմանները, 2-9-րդ կետերի դրույթներն անհրաժեշտության դեպքում կիրառվեն համապատասխան փոփոխություններ կատարելիս:*

*ի) **11-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները՝ ուղղված գենետիկորեն փոփոխված օրգանիզմները շրջակա միջավայր դիտավորյալ բացթողնման թույլտվությունների տրման հետ առնչվող որոշումների նկատմամբ 6-րդ հոդվածի դրույթների կիրառումն ապահովելուն:*

2023 թվականին ընդունվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը: Օրենսդրական փոփոխությունների շրջանակներում վերանայվել են՝

- հասկացությունները, որոնք հիմնարար նշանակություն ունեն վավերացված միջազգային իրավական ակտերի և իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից,

- նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի ու ըստ բնագավառների դասակարգվել են երկու՝ Ա և Բ կատեգորիաների, հին օրենքում դրանք երեքն էին՝ Ա, Բ, Գ կատեգորիաներ: Վերանայվել են նաև գործունեության տեսակները՝ համապատասխանեցնելով Օրհուսի կոնվենցիային և ԵՄ համապատասխան դիրեկտիվին (2011/92/ԵՄ 2001/42/ԵՀ հրահանգ, 2003/35/ԵՀ հրահանգ)՝ հաշվի առնելով նաև Հայատանում պրակտիկ կիրառման փորձը /նոր ՇՄԱԳ օրենքի հոդված 12/:
- հանրային լսումների վերջնաժամկետները, համաձայն Օրհուսի կոնվենցիայի, մանրամասն ընթացակարգերը ընդունվել են ենթաօրենսդրական մակարդակով, մասնավորապես նոր օրենքով ամբողջությամբ վերանայվել են հանրային լսումների ծանուցման և անցկացման մոտեցումները.

- ✓ երկարաձվել են ինչպես ծանուցումից հետո հանրային լսումների կազմակերպման, այնպես էլ հանրության առաջարկությունների, դիտողությունների և կարծիքների ներկայացման ժամկետները,
- ✓ եթե հին օրենքով բոլոր դեպքերում այն իրականացվում էր 7 օր հետո, ապա նոր օրենքով նախնական համաձայնեցման փուլում՝ ծանուցումից հետո՝ 21-ից 25-րդ աշխատանքային օրը, իսկ Փորձաքննության ընթացքում՝ ծանուցումից ոչ շուտ, քան 15-րդ օրը:

- կրճատվել են փորձաքննության փուլերը, նախատեսված են.

- ✓ ՇՄԱԳ փուլ, երբ նախաձեռնողը՝ համապատասխան լիցենզիա ունենալու դեպքում կամ համապատասխան լիցենզիա ունեցող անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի միջոցով գնահատում է նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, բացահայտում և հիմնավորում նախատեսվող գործունեության՝ նախագծային փաստաթղթով, և այլն,
- ✓ նախնական համաձայնության կամ անհամաձայնության փուլ,
- ✓ փորձաքննության փուլ:

ՇՄԱԳՓ օրենքի Հոդված 16.-ի համաձայն, նախնական համաձայնության կամ անհամաձայնության փուլում.

1. Նախաձեռնողը, որը մտադիր է իրականացնել սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված նախատեսվող գործունեություն համայնքում, որի վարչական սահմաններում իրականացվելու է նախատեսվող գործունեությունը, համայնքի ղեկավարին է ներկայացնում ծանուցում, որը ներառում է՝

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան, նպատակը, համառոտ նկարագիրը.

3) նախատեսվող գործունեության իրականացման վայրը:

2. Համայնքի ղեկավարը ծանուցումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, կատարում է շահագրգիռ հանրության ծանուցում և ծանուցումից հետո՝ ոչ շուտ, քան 21-րդ և ոչ ուշ, քան 25-րդ աշխատանքային օրն իրականացնում է հանրային լսում ազդակիր բնակավայրում:

- հստակեցվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման գործընթացը,

- - Առաջին անգամ սահմանվել է, որ կառավարությունը ուղեցույց է տրամադրելու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ,

- Ամբողջությամբ վերանայվել են փորձագիտական եզրակացությունները անվավեր ճանաչելու հիմքերը,

- Հստակեցվել են նախատեսվող գործունեության գնահատման և հետազոտման գործընթացում ձեռնարկատերերի իրավունքներն ու պարտականությունները.

- Վերանայվել են հարակից օրենքները:

Փորձագիտական Բոլոր եզրակացությունները տեղադրվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում:

16. ՕՐՀՈՒՍԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 6-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթների իրագործման ժամանակ:

Չնայած այն բանին, որ ՀՀ ՇՄՆ կայքում տեղադրվում և Օրհուսի կենտրոնի կողմից ակտիվորեն տարածվում է հասարակական լսումների մասին տեղեկատվությունը, որոշ դեպքերում այդ տեղեկատվությունը հասանելի է լինում հասարակական լսումներ կազմակերպելու օրվանից շատ կարճ ժամանակ առաջ: Հետևաբար, որոշ դեպքերում հետաքրքրված հանրությունը ժամանակին չի տեղեկացվում հասարակական լսումների հայտարարությունների և նախագծային փաստաթղթերի մասին: Այս առումով կարևոր է ՀԿ-ների դերը, որոնք իրենց հերթին տարածում են նախատեսվող գործունեության հանրային լսումների մասին տեղեկությունն իրենց խողովակներով:

Ֆոկուս խմբային քննարկման ժամանակ, խմբում ներգրավված ՀԿ ներկայացուցիչներն ու փորձագետները հանրության մասնակցության առումով քարտեզագրել են հետևյալ

խնդիրները.

- ՇՄԱԳ գործընթացից հետո դիտողություններ ներկայացնելու հստակ ձևաչափի բացակայություն:
- Հանրային առաջարկությունների գնահատման չափորոշիչների բացակայություն:
- Մերժված առաջարկությունների հիմնավորումների չներկայացումը:
- «Իրազեկում» և «ծանուցում» հասկացությունների իրավական անորոշություն:
- Օրենքը չի նախատեսում երկրորդ լսումից հետո կարծիքներ ներկայացնելու հնարավորություն:
- Հիմնադրույթային փաստաթղթերի մշակման փուլում հանրային լսումների բացակայություն:
- Հանրային լսումների քանակի կրճատում:
- Հասարակական խորհուրդների ցածր արդյունավետություն:
- E-draft հարթակի սահմանափակ կիրառություն՝ որպես հանրային մասնակցության գործիք:

17. ՕՐՀՈՒՍԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն գործունեության կոնկրետ տեսակների վերաբերյալ որոշումների ընդունմանը հասարակայնության մասնակցության մասին 6-րդ հոդվածի դրույթների կիրառման վերաբերյալ, օրինակ՝ կա՞ն արդյոք վիճակագրական տվյալներ կամ այլ տեղեկատվություն գործունեության կոնկրետ տեսակների վերաբերյալ որոշումների ընդունմանը հասարակության մասնակցության մասին կամ նախատեսվող գործունեության տեսակների նկատմամբ ազգային անվտանգության նկատառումներից ելնելով տվյալ հոդվածի դրույթները չկիրառելու որոշման մասին:

Այժմ գործում են հետևյալ ենթաօրենսդրական ակտերը և 2014թ. ընդունված և 2023 թվականին նոր խմբագրությամբ ընդունված ՇՄԱԳՓ օրենքը.

- ✓ Կառավարության որոշում Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին (19.11.2014թ. 1325-Ն, փոփոխված՝
- ✓ ✓ 30.12.2023
- ✓)
- ✓ Կառավարության որոշում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին (25.07.2024 N 1143-Ն)

- ✓
- ✓ Կառավարության որոշում Հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին (09.04.2015թ. 399-Ն)
- ✓ Կառավարության որոշում շրջակա միջավայրին հնարավոր տնտեսական վնասի գնահատման և փոխհատուցման կարգը հաստատելու մասին (27.05.2015թ. 764-Ն):
- ✓ Կառավարության որոշում Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին (1.12.2023 թ. N 2294-Ն):

2016 թվականի հուլիսի 29-ի կառավարության նիստում որոշում է ընդունվել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրառման մեթոդական ուղեցույցները հաստատելու մասին: Վերջինով հաստատվել են՝

1. Օգտակար հանածոների երկրաբանական հետազոտությունների իրավունք ստանալու նպատակով շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հարցման ներկայացման մեթոդական ուղեցույցները,
2. Օգտակար հանածոների երկրաբանական հետազոտությունների իրավունք ստանալու նպատակով շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման զեկույցի ներկայացման մեթոդական ուղեցույցները,
3. Հանքի փակման մեթոդական ուղեցույցը,
4. Օգտակար հանածոների երկրաբանական հետազոտությունների իրավունք ստանալու նպատակով շրջակա միջավայրի վրա ֆինանսական ազդեցության նախնական գնահատման զեկույցի ներկայացման մեթոդական ուղեցույցները,
5. Օգտակար հանածոների երկրաբանական հետազոտությունների իրավունք ստանալու նպատակով շրջակա միջավայրի վրա սոցիալ-տնտեսական ազդեցության նախնական գնահատման հարցման ներկայացման մեթոդական ուղեցույցները,
6. Օգտակար հանածոների երկրաբանական հետազոտությունների իրավունք ստանալու նպատակով շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման զեկույցի լրիվության գնահատման մեթոդական ուղեցույցը:

Անհրաժեշտ է նշել, որ առկա է հասարակական լսումներին մասնակիցների թվի աճի որոշակի դինամիկա, սակայն ինչը նույնատիպ չէ բոլոր դեպքերի և բոլոր վայրերի համար: 2020 թվականի հուլիսի 29-ին ստորագրվել է հուշագիր «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ի և Երևանի Օրհուս կենտրոնի միջև: Հուշագրի ստորագրումը նպատակ ունի խորացնել համագործակցությունը էկոլոգիական տեղեկատվության տարածման գործում՝ փորձաքննության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում, ակտիվացնել պետության և Օրհուս-կենտրոնների միջև երկխոսությունը, ինչը կնպաստի կողմերի միջև կառուցողական երկխոսության ձևավորմանը: Հուշագրի շրջանակներում կանցկացվեն համատեղ ուսուցողական առցանց սեմինարներ:

18. 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ

Նշեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան:

Տարի՝ ***2018-2020***

www.mta.gov.am, www.env.am, www.nature-ic.am, www.snund.am,
http://env.am/announcement/public-reviews

19. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼ ՔԱՅԼԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ

Թվարկեք համապատասխան գործնական և/կամ այլ միջոցառումները, որոնք ձեռնարկվել են բնությանն առնչվող պլանների և ծրագրերի պատրաստման գործընթացում հասարակության մասնակցությունն ապահովելու համար՝ համաձայն 7-րդ հոդվածի դրույթների: Ներկայացրեք 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումների և 3-րդ հոդվածի 9-րդ կետի՝ խտրականություն չկիրառելու վերաբերյալ պահանջի արտացոլումը ազգային օրենսդրության մեջ:

ՇՄԱԳՓ նոր օրենքի համաձայն ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննության ենթակա են սոցիալ-տնտեսական զարգացման, էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, զբոսաշրջության, տարածքային զարգացման, ընդերքօգտագործման, արդյունաբերական ճյուղերի, ռեկրեացիայի, անտառատնտեսության, ձկնաբուծության, թափոնների գործածության, ջրային տնտեսության բնագավառներին վերաբերող հիմնադրույթային փաստաթղթերի նախագծերը, որոնք սույն օրենքի 12-րդ հոդվածում թվարկված նախատեսվող գործունեությունների տեսակների կամ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված նախագծերի իրականացման հիմքեր են պարունակում:

Հանրային լսումների վերաբերյալ ծանուցումը հրապարակվում է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով, փակցվում է մարզպետարանի կամ ազդակիր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և ազդակիր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի կամ հանրային նշանակության շենքերի (մշակույթի, արվեստի, գիտական, կրթական, ուսումնական նշանակության շենքերի) հայտարարությունների ցուցատախտակի վրա, հրապարակվում է ազդակիր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների, նախաձեռնողի պաշտոնական կայքերում (առկայության

դեպքում): Փորձաքննության ընթացքում ծանուցումը տեղադրվում է նաև լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

Հասարակական լսումների ամբողջ գործընթացը արձանագրվում է և տեսաձայնագրվում է պատասխանատու մարմնի կողմից: Հանրային քննարկումները կարող են տեսաձայնագրվել այլ մասնակիցների կողմից և ներկայացվել փորձաքննական կենտրոն: Օրենքի Հոդված 9. 4-րդ կետի համաձայն.

Պետական փորձաքննական դրական կամ բացասական եզրակացությունները կազմելիս հաշվի են առնվում գործընթացի մասնակիցների ներկայացրած առաջարկությունները, դիտողությունները, կարծիքները և հանրային լսումների արդյունքները: Գործընթացի մասնակիցների կարծիքները չընդունելու դեպքում լիազոր մարմինը տալիս է հիմնավոր պատճառաբանումներ: Պետական փորձաքննական եզրակացությունը հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը:

2015թ. Սահմանադրության 29-րդ հոդվածով ամրագրված է խտրականության արգելման սկզբունքը:

20. 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԱԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պարզաբանեք, թե ինչ հնարավորություններ են ընձեռվում հասարակայնությանը 7-րդ հոդվածի համաձայն՝ մասնակցելու շրջակա միջավայրին վերաբերող քաղաքականությունների մշակմանը:

Հասարակության մասնակցությունը ծրագրերի և պլանների նախապատրաստման ժամանակ ապահովվում է հետևյալ միջոցներով. հանրային հավաքներ, հասարակական կարծիքի հարցումներ, երբեմն աշխատանքային քննարկումներ՝ տարբեր շահագրգիռ խմբերի փորձագետների մասնակցությամբ: Տարբեր ծրագրերի իրականացման համար ստեղծվել են տարբեր խմբեր, որոնցում ընդգրկված են փորձագետներ: Հասարակական կազմակերպությունների (որպես շահագրգիռ հասարակություն) փորձագետները, համապատասխան նախարարությունների ներկայացուցիչները և այլ մասնագետներ հանդիսանում են այս գործընթացում հիմնական թիրախային խմբերը: Օրինակ՝ Քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները վերհանելու, դրանց շուրջ քննարկումներ կազմակերպելու եւ միասնական լուծումներ առաջարկելու նպատակով ձեւավորվել է Քաղաքաշինության կոմիտեի նախագահին կից Քաղաքաշինական խորհուրդ:

21. 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 7-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթների իրացման ընթացքում:

Պետական պաշտոնյաների համագործակցությունը անկախ փորձագետների հետ կարիք ունի հետագա կատարելագործման: ՇՄՆ նախարարին կից հասարակական խորհրդի աշխատանքների բնականոն վերականգնումը նոր մեկնարկ և լուծում կտա այս հարցերին:

Զեկույցի 3-րդ կետում արդեն նշել ենք, որ 2024 թվականին մշակվել և քննարկման է դրվել ՀՀ վարչապետի որոշման նախագիծը ՀՀ նախարարությունների հասարակական խորհրդի աշխատակարգը և ձևավորման կարգը հաստատելու մասին: Այս որոշման ընդունմամբ հասցեական լուծումներ կտրվեն առկա խնդիրներին և բացերին: ՀՀ նախարարությունների հասարակական խորհրդի նպատակը բաց և ներառական որոշումներ կայացնելուն նպաստող կենսունակ միջավայրի ձևավորումն է՝ խրախուսելով մասնակցային կառավարումը, շահառու խմբերին ներգրավելով քաղաքականության մշակմանը և իրականացմանը, ապահովելով հանրության հետ արդյունավետ ու թիրախային հաղորդակցություն: Խորհուրդը նախարարության, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և հանրության հետ մասնակցային, ներառական որոշումների կայացման ու հաղորդակցության հարթակ է լինելու, որի անդամները նախարարությունների «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործունեության հիմնական ոլորտների քաղաքականության մշակման և/կամ իրականացման տարբեր փուլերում մասնակցում են տարաբնույթ խնդիրների լուծմանը:

22. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն որոշակի գործողությունների վերաբերյալ որոշումների ընդունմանը հասարակության մասնակցության մասին 7-րդ հոդվածի դրույթների կիրառման վերաբերյալ:

Ստորև ներկայացված հղումով հասանելի են ՀՀ շրջակա միջավայրի նախարարին կից հասարակական խորհրդին առնչվող փաստաթղթերը:

http://env.am/naxararutyun/the-councils-attached-to-the-minister

Ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցները արձանագրել են նաև դրական առաջընթացը, մասնավորապես.

- ՇՄԱԳ օրենքի փոփոխություններով բարելավվել են հանրային ծանուցման ժամկետները (Ա կատեգորիայի դեպքում՝ 25 օր, Բ կատեգորիայի դեպքում՝ 20 օր):
- Պլանավորվող ՇՄԱԳՓ կենտրոնի գործունեության թվայնացումն ու առցանց հարթակի ներդրումը կնպաստի թափանցիկությանը:

- Մշակման փուլում է գտնվում «Շրջակա միջավայրի վրա ազդեցություն և փորձաքննություն» ՊՈԱԿ-ի կայք էջը

23. ՀՈԴՎԱԾ 7-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ

Նշեք համապատասխան վեբ_կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան.

www.nature-ic.am, www.gov.am, www.env.am, www.armstat.am, www.e-gov.am, www.meteomonitoring.am, www.e-draft.am , www.azdarar.am

24. 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԶԳԱԼԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՆՔԵՐ

Ներկայացրեք, թե ինչ միջոցառումներ են իրականցվում աջակցելու համար հասարակայնության արդյունավետ մասնակցությանը պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունեցող անմիջական կիրառման նորմատիվ դրույթների և այլ ընդհանուր կիրառում ունեցող իրավաբանորեն պարտադիր նորմատիվ ակտերի մշակման գործում՝ համաձայն 8-րդ հոդվածի: Որքանով հնարավոր է, ներկայացրեք 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումների և 3-րդ հոդվածի 9-րդ կետի՝ խտրականություն չկիրառելու վերաբերյալ պահանջի արտացոլումը (ազգային օրենսդրության մեջ):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն. «Շահագրգիռ հասարակությունը» հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով անմիջական կամ հավանական ազդեցություն կրող կամ դրանց վերաբերյալ ընդունվող որոշումների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձիք են (հոդված 4, կետ 18): Միայն 2001 թվականին Կոնվենցիան վավերացնելուց հետո բնապահպանական գործունեությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները սկսեցին ճանաչվել որպես շահագրգիռ հասարակություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացքում: ՀՀ կառավարության N 1325-Ն որոշմամբ սահմանվում են հասարակության մասնակցության իրավական հիմքերը այն նորմատիվ իրավական ակտերի նախապատրաստման գործընթացում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Շահագրգիռ հանրության մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին ապահովվում է ծանուցման և հանրային լսումների միջոցով՝ հիմնադրութային փաստաթղթի նախագծի և ՌԷԳ հաշվետվության կամ նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթի և ՇՄԱԳ հաշվետվության գնահատման և փորձաքննության գործընթացներում: Հանրային լսումները և քննարկումներն անցկացվում են օրենքին և

կառավարության 1325-Ն որոշմանը համապատասխան: Այն դեպքում, երբ ազդակիր բնակավայրերի թիվը մեկից ավելի է հանրային լսումը կազմակերպվում է այն բնակավայրում, որտեղ նախատեսվում է իրականացնել նախատեսվող գործունեությունը՝ ապահովելով բոլոր ազդակիր բնակավայրերի ներկայացուցիչների մասնակցությունը: Նախատեսվող գործունեությունը մեկից ավելի բնակավայրերում իրականացվելու դեպքում, հանրային լսումը կազմակերպվում է այդ բնակավայրերից յուրաքանչյուրում՝ ապահովելով բոլոր ազդակիր բնակավայրերի ներկայացուցիչների մասնակցությունը: Հասարակական կարծիքի ստացումը հիմնական փաստաթղթերի և նախատեսվող գործունեության վերաբերյալ իրականացվում է հանրային լսումների միջոցով: Հանրությունը կարծիքներ, դիտողությունները կամ առաջարկությունները կարող է ներկայացնել ինչպես բանավոր, այնպես էլ՝ գրավոր:

Հանրային ծանուցումն իրականացվում է նույն ձևով, ինչպես ներկայացված է նախորդ կետում: Հիմնադրույթայիններիներկայացված է նախորդ կետում: մ, որտեղ նախատեսվում է իրականացնել նախատեսվող գոման ժամանակ ծանուցումը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) հիմնադրույթային փաստաթղթի նախագիծը և ՌԷԳ հաշվետվությունը, տեղեկություններ նախատեսվող գործունեության, ներառյալ ցանկացած տեղեկություն դրանց հնարավոր անդրսահմանային ազդեցության վերաբերյալ.
2) հիմնադրույթային փաստաթղթի նախագծի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հնարավոր որոշումների կայացման բնույթը.
3) փորձաքննության ընթացակարգերը և ժամկետները.
4) անդրսահմանային ազդեցության գնահատման գործընթացին մասնակցելու մտադրության մասին տվյալ պետության պատասխան տալու ժամկետները: Լիազոր մարմինն աջակցում է նախաձեռնողին ծանուցումը և հարցումը նախապատրաստելու գործընթացում:

Գոյություն ունի բնապահպանական օրենսդրության նախագծերի վերաբերյալ խորհրդարանական լսումների անցկացման պրակտիկա՝ հասարակական կազմակերպությունների և ոլորտային նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Վերջինս հնարավորություն է տալիս ակտիվորեն մասնակցել և անել հիմնավոր առաջարկներ: Բացի այդ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները մասնակցում են օրենսդրական նախագծի մշակման կամ լսումների վաղ փուլում: Օրինակ՝ 2019 թվականին «Էկոլոգիական տեղեկատվության մասին» օրենքի կամ «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին» օրենքի հանրային լսումներին և այլն:

Ինչպես երևում է, արդեն ստեղծվել են իրավական մեխանիզմներ՝ ապահովելու հասարակության մասնակցությունը պետական մարմինների կողմից նորմատիվ իրավական ակտերի և այլ համընդհանուր պարտադիր կիրառելի իրավական նորմերի նախապատրաստման գործընթացում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Սակայն դեռևս անլուծելի է մնում գործնականում իրավական կարգավորումների արդյունավետ

կիրառման խնդիրը:

Ինչ վերաբերում է Կոնվենցիայի համապատասխան սահմանումների տեղայնացմանը ազգային օրենսդրությանը, ապա անհրաժեշտ է ասել, որ մինչև 2015 թվականի ՀՀ Սահմանադրության ընդունումը, Հայաստանի կողմից վավերացված միջազգային կոնվենցիաների նորմերը հանդիսանում էին ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: 2015 թվականի իրավակարգավորումը (Սահմանադրություն, 2015) այս առումով նախատեսում է միայն այն, որ ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի և ՀՀ օրենքների միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

25. 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 8-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթների իրացման ընթացքում:

2014 թվականի կառավարության N 1325-Ն որոշմամբ կան փոփոխություններ հասարակության առավել արդյունավետ մասնակցության վերաբերյալ, քանի որ մանրակրկիտ կարգավորվում են հանրային ծանուցման և լսումների հիմքերը՝ կապված հիմնադրույթային փաստաթղթերի և նախատեսվող գործունեության Ա, Բ կատեգորիաների դեպքում նախատեսված ընթացակարգերի: Բացի այդ, լիազորված բոլոր մարմինները իրավական ակտերի նախագծերի մասին հասարակությանը տեղեկացնում են իրենց պաշտոնական կայքերի, ինչպես նաև www.e-draft էլեկտրոնային հարթակի միջոցով: Կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 2-ի N 1134-Ն որոշման հիման վրա Արդարադատության նախարարության կողմից գործարկվել է իրավական ակտերի նախագծերի տեղադրման միասնական կայք: Բոլոր պետական մարմինները պարտավոր են իրենց նորմատիվ իրավական ակտերը տեղադրել վերոնշյալ կայքում, որտեղ ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են առաջարկներ և դիտողություններ անել: Բովանդակային բոլոր առաջարկները հաշվի են առնվում նորմատիվ ակտի նախագիծը մշակած մարմնի կողմից, և դրա մասին նշվում է փաստաթղթում (եզրափակիչ թերթիկում):

26. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տրամադրեք լրացուցիչ տեղեկություններ հասարակայնության մասնակցության վերաբերյալ 8-րդ հոդվածի մասով:

Հայաստանում գոյություն ունի պրակտիկա, երբ Ազգային ժողովը կազմակերպում է հանրային լսումներ, որոնց ներգրավվում են զանգվածային լրատվության միջոցները, հասարակական կազմակերպությունները, պաշտոնատար և այլ անձինք (օրինակ՝ «Սևանա լիճ մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ,

«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ): Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում գոյություն ունի անկախ փորձագետների ինստիտուտ: Դրա շրջանակներում աշխատում են գիտական և ոչ կառավարական հատվածների ներկայացուցիչներ: Պետական մարմինները խրախուսում են հասարակական կարծիքի արտահայտումը՝ օրենսդրական ակտերի նախագծերը համացանցում հրապարակելու միջոցով:

2016 թվականից սկսած, www.e-draft կայքում բոլոր պետական մարմինները տեղադրում են իրենց իրավասության ներքո մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որտեղ հասարակությունը կարող է առաջարկներ և դիտողություններ անել:

2010 թվականից մինչև 2017 թվականի դրությամբ գործում էր նաև պաշտոնական https://www.e-gov.am/ կայքը, որի միջոցով ՀՀ-ն անցում է կատարել էլեկտրոնային կառավարման համակարգի: Կայքում կարող եք ծանոթանալ կառավարության գործունեությանը, ակտերին, կառավարության որոշումների/կարգադրությունների նախագծերին:

27. 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ

Նշեք համապատասխան վեբ-կայքերի հասցեները, եթե այդպիսիք կան.

www.justice.am, www.env.am, www.facebook.com/mnparmenia, www.gov.am, www.aarhus.am, www.elrc.ysu.am, www.e-draft, https://www.e-gov.am/.

28. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

Թվարկեք օրենսդրական, նորմատիվ և այլ միջոցներ՝ արդարադատության մատչելիությանն առնչվող Հոդված 9-ի դրույթների իրականացման համար: Բացատրեք, թե ինչպես են իրականացվում հոդվածի յուրաքանչյուր կետի դրույթները:

Պարզաբանեք, թե ինչպես է իրագործվում 9-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրը: Ներկայացրեք 2-րդ հոդվածի համապատասխան սահմանումների և 3-րդ հոդվածի 9-րդ կետի՝ խտրականություն չկիրառելու վերաբերյալ պահանջի արտացոլումը (ազգային օրենսդրության մեջ): Բացի այդ, նշեք մասնավորապես հետևյալը՝

*ա) **1-ին կետի** մասով ձեռնարկված միջոցները, որպեսզի*

(i) յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ իր՝ 4-րդ հոդվածին համապատասխան ներկայացված տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումը չի քննարկվել այդ հոդվածի դրույթներին համապատասխան, վերանայման ընթացակարգի հնարավորություն ունենա դատարանում կամ օրենքի համաձայն հիմնված անկախ և անկողմնակալ այլ մարմնում:

(ii) այն դեպքերում, երբ նախատեսվում է դատական քննություն, անձի համար պետք է մատչելի լինի նաև որոշման վերանայման օրենքով սահմանված արագ ընթացակարգ, որն անվճար է կամ ոչ թանկ և իրականացվում է ոչ դատական պետական կամ այլ անկախ և անկողմնակալ մարմնի կողմից:

(iii) սույն կետին համապատասխան ընդունված վերջնական որոշումները պարտադիր լինեն տեղեկատվություն տնօրինող պետական մարմնի համար, և տեղեկատվություն տրամադրելու մասին հարցումը մերժելու դեպքում պատճառները շարադրվեն գրավոր:

*բ) ձեռնարկված միջոցները՝ ուղղված նրան, որպեսզի ազգային օրենսդրության շրջանակներում **2-րդ կետում** նշված չափանիշներին համապատասխանող հասարակայնության ներկայացուցիչների համար մատչելի լինի վերանայման ընթացակարգը դատարանում կամ օրենքի համաձայն հիմնադրված այլ անկախ և անկողմնակալ մարմնում վիճարկելու 6-րդ հոդվածի դրույթներից բխող ցանկացած որոշման, գործողության կամ անգործության նյութական և ընթացակարգային օրինականությունը:*

*գ) **3-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որոնք ապահովում են, որպեսզի ազգային օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (եթե այդպիսիք առկա են) համապատասխանող հասարակայնության ներկայացուցիչներին մատչելի լինեն վարչական կամ դատական ընթացակարգերը՝ մասնավոր անձանց կամ պետական մարմինների՝ շրջակա միջավայրին վերաբերող ազգային օրենսդրության դրույթները խախտող գործողությունները կամ անգործությունը վիճարկելու համար:*

*դ) **4-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որպեսզի՝*

(i)1-ին, 2-րդ և 3-րդ կետերում հիշատակված ընթացակարգերն ապահովեն իրավական պաշտպանության համարժեք և արդյունավետ միջոցներ,

(ii) հակառակ դեպքում այդպիսի ընթացակարգերը համապատասխանեն սույն կետի պահանջներին:

*ե) **5-րդ կետի** մասով՝ ձեռնարկված միջոցները, որոնք ապահովում են, որպեսզի հասարակայնությանը տրամադրվի տեղեկատվություն որոշումների վերանայման վարչական և դատական ընթացակարգերի մատչելիության վերաբերյալ:*

i) *յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ իր՝ 4-րդ հոդվածին համապատասխան ներկայացված*

տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումը չի քննարկվել այդ հոդվածի դրույթներին համապատասխան, վերանայման ընթացակարգի հնարավորություն ունենա դատարանում կամ օրենքի համաձայն հիմնված անկախ և անկողմնակալ այլ մարմնում:

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի համաձայն.

1. *Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:*
2. *Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:*
3. *Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:*

ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ հոդվածը տալիս է վարչական մարմնի սահմանումը (սահմանումը ներառում է բոլոր պետական կառավարման մարմինները, որոնք իրականացնում են վարչարարություն), ինչը ընդհանուր առմամբ համապատասխանում է Օրհուսի կոնվենցիայի սահմանմանը:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը նախատեսում է արդար դատական քննության իրավունք, մասնավորապես՝

1. *«Յուրաքանչյուրն ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:*
2. *Դատական վարույթը կամ դրա մի մասը օրենքով սահմանված դեպքերում և կարգով կարող է դատարանի որոշմամբ անցկացվել դռնփակ՝ դատական վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների շահերի կամ արդարադատության, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:*
3. *Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է»:*

ՀՀ-ում արդարադատությունը իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: ՀՀ-ում գործում են *Սահմանադրական Դատարանը, Վճռաբեկ դատարանը, Վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև Վարչական դատարանը:* Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

Արգելվում է արտակարգ դատարանների ստեղծումը:

2018 թվականի փետրվարի 7-ին ընդունվել է Դատական օրենսգիրքը, որի համաձայն առաջին

ատյանի դատարանները լինում են՝ *1) ընդհանուր իրավասության դատարաններ. 2) մասնագիտացված դատարաններ: Մասնագիտացված դատարաններ են հանդիսանում՝ վարչական դատարանը և սնանկության դատարանը: Վերաքննիչ դատարաններ են հանդիսանում՝ 1) Վերաքննիչ քրեական դատարանը. 2) Վերաքննիչ քաղաքացիական դատարանը. 3) Վերաքննիչ վարչական դատարանը:* Անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքներն ու ազատությունները մեկնաբանելիս հաշվի է առնվում ՀՀ-ն կողմից վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

ii) Դատական օրենսգիրքը ամրագրում է ողջամիտ ժամկետի չափանիշները, մասնավորապես՝ գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում.

1) *գործի հանգամանքները, այդ թվում՝ դրա իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և գործի քննության տևողության հետևանքները վարույթի մասնակցի համար,*
2) *հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,*
3) *գործի ընդհանուր քննության տևողությունը,*
4) *Բարձրագույն դատական խորհրդի սահմանած գործի քննության միջին ուղենիշային տևողությունը:*

Եթե օրենքով գործի քննման և լուծման համար սահմանված է հատուկ ժամկետ, ապա այն պետք է քննվի և լուծվի այդ ժամկետում: Նման ժամկետի երկարաձգումը թույլատրվում է բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Պետական տուրքի մասին օրենքը նախատեսում է պետական տուրքի գանձման օբյեկտները, մասնավորապես՝ պետական տուրքը ՀՀ-ում գանձվում է *դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար:*

Պետական տուրքի մասին օրենքի[36] 9-րդ հոդվածի համաձայն, նախատեսված են պետական տուրքի դրույքաչափեր դատարան ներկայացվող հայցադիմումների, դիմումների և բողոքների, դատարանի որոշումների դեմ վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրամադրվող փաստաթղթերի պատճենների կամ ձայնագրությունների (կրկնօրինակների) համար: Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով (նշենք միայն այն դրույքաչափերը, որոնք կարող են կարևոր լինել տվյալ թեմայի առումով) (Տես՝ աղյուսակ 2).

---

36 https://www.arlis.am/documentview.aspx?docid=74375

- Հատուկ վարույթի գործերով դիմումներից	բազային տուրքի ութապատիկի չափով
- Դատարանի որոշումների դեմ վճռաբեկ բողոքներ	այն պետական տուրքի չափով, որը ենթակա է վճարման հայցադիմում (արտադատական վարույթի դիմում) ներկայացնելիս, իսկ գույքային վեճերի դեպքում՝ վիճարկվող գումարի 30 տոկոսի չափով
- Նոր երևան եկած հանգամանքներով գործերի վերանայման հետ կապված հայցադիմումներից հայցադիմում ներկայացնելիս	հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից
- Դատարանի վճռի, դատավճռի և որոշման պատճենի (կրկնօրինակի) տրամադրում	բազային տուրքի 50 տոկոսի չափով, և բացի այդ՝ պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով

www.court.am կայքից կարելի է ստանալ տեղեկություններ դատական համակարգի և դատական իշխանության գործունեությանն առնչվող բոլոր նորությունների մասին: Ստեղծվել են www.datalex.am, www.armlaw.am (ՀՀ դատական ակտերի որոնման համակարգ),

www.aelis.amկայքերը, որտեղ հասանելի են ՀՀ դատական համակարգի բոլոր դատարանների ակտերը: www.datalex.am վեբ-կայքի միջոցով կարելի է առանց որևէ սահմանափակումների և անվճար ներբեռնել տարբեր դատական ատյանների դատական որոշումները: Կայքը գործում է երեք լեզուներով: Որոնման հիմնական չափանիշներն են՝ դատական գործի տեսակը, համարը, դատարանի անունը, դատավորի անունը, հայցվորի անունը, պատասխանողի անունը, հայցի ներկայացման ամսաթիվը, դատական գործի առարկան, վճիռ կայացնելու ամսաթիվը, հոդվածը և այլն: Կայքում նաև կարելի է ծանոթանալ դատական նիստերի ժամանակացույցին, առցանց դիմումներ ներկայացնել, ծանոթանալ նախադեպային գործերին, փնտրել իրավական ակտեր, ծանոթանալ ՄԻԵԴ գործերին և այլն:

Բացի այդ, իրավական պաշտպանության միջոցները ապահովվում են Դատախազության գործունեությամբ, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից, որը քննարկում

է Սահմանադրությամբ, օրենսդրական ակտերով և ՀՀ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները խախտող պաշտոնատար անձանց և կազմակերպությունների գործողությունների և որոշումների վերաբերյալ քաղաքացիների դիմումները: «Դատախազության մասին» ՀՀ օրենքը նաև սահմանում է այս մարմնի լիազորությունները՝ պետական շահերի պաշտպանության ուղղությամբ, որոնց մեջ ներառվում են նաև շրջակա միջավայրի պահպանության հարցերը:

Վերանայված Սահմանադրությամբ ամրագրված է (2015թ. Սահմանադրության 191-րդ հոդված), որ

3. *Մարդու իրավունքների պաշտպանը անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը*:
4. *Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին: Հաղորդումը կարող է պարունակել օրենսդրական կամ այլ բնույթի միջոցառումների վերաբերյալ առաջարկներ:*
5. *Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են օրենքով սահմանված կարգով Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ, ինչպես նաև աջակցել նրա աշխատանքներին:*

Մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ տարածվում է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիության իրավունքը:

Մարդու իրավունքների պաշտպանի կայքում (www.ombuds.am) կարելի է ծանոթանալ բոլոր նշված փաստաթղթերին, ինչպես նաև պաշտպանին դիմել առցանց: Հրատապ հարցի դեպքում կարելի է դիմել թեժ գծի միջոցով: Կայքը ներկայումս գտնվում է բարելավման և վերամշակման փուլում:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում առկա է տեղեկատվություն բնապահպանական իրավունքների պաշտպանության վիճակի մասին:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունում ընդգրկվել է actio popularis սկզբունքը՝ ՀԿ-ների դատական պաշտպանության հնարավորությունների ընդլայնման համար:

ՀՀ Դատական օրենսգրքի 13-րդ հոդվածով ամրագրվում է դատական ակտերի պարտադիրությունը, մասնավորապես.

- *Եզրափակիչ դատական ակտը դատարանը կայացնում է Հայաստանի Հանրապետության անունից:*
- *Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են դրանց հասցեատերերի համար:*
- *Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:*

ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ի N 1133-Լ որոշմամբ հաստատվել է Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը:

Քրեական օրենսգրքի փոփոխությամբ ավելացվել են բնապահպանական հանցագործությունների պատժելիության մեխանիզմները:

29. 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՆԴԻՊԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Նշեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 9-րդ հոդվածի կետերից յուրաքանչյուրի դրույթների իրացման ընթացքում:

Ըստ ֆոկուս-խմբային քննարկման արդյունքների.

- Վարչական դատավարության օրենսգրքում ՀԿ-ների հայցի իրավունքը ենթակա է խիստ սահմանափակումների, այդ թվում՝ 2 տարվա փորձի առկայության, հանրային քննարկումներին մասնակցության և կանոնադրական նպատակների համապատասխանության պահանջ է դրված:
- Շրջակա միջավայրի շահերի պաշտպանության ոլորտում դիտվում են SLAPP դատական գործեր, որոնք ուղղված են ՀԿ-ների ու ակտիվիստների լռեցմանը: 2024 թվականին միայն մեկ ընկերություն՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, նախաձեռնել է 7 նմանատիպ հայց:

30. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տրամադրեք լրացուցիչ տեղեկատվություն արդարադատության մատչելիության վերաբերյալ 9-րդ հոդվածի դրույթների իրացման վերաբերյալ, օրինակ՝ գոյություն ունեն արդյոք վիճակագրական տվյալներ շրջակա միջավայրին առնչվող հարցերով արդարադատության վերաբերյալ կամ կան արդյոք արդարադատության մատչելիությանը

խոչընդոտող ֆինանսական կամ այլ արգելքների վերացման կամ կրճատման համար աջակցության մեխանիզմներ:

2019-2020 թվականներին Բարձրագույն դատական խորհրդի շրջանակներում աշխատանքներ են տարվել շրջակա միջավայրի հարցերով արդարադատության վիճակագրություն կազմելու ուղղությամբ: Նախորդ զեկույցի պատրաստման ժամանակ ՀԿ ներկայացուցիչները հարցաթերթիկում նշել են, որ դատարան բողոք ներկայացնելու համակարգը ոչ արդյունավետ է. նույնիսկ եթե դատավորները մասնագետներ են, նրանք չունեն նեղ էկոլոգիական գործերով համապատասխան որակավորում: Արդարադատության հասանելիության խոչընդոտների շարքում նշվել են նաև դատական գործընթացների երկարատևությունը, շրջակա միջավայրին առնչվող գործերով որակավորված փաստաբան գտնելու դժվարությունը և այլն:

Կոնվենցիայի կողմերի VII/8a որոշման 2 c) կետում նշված է ՀԿ-ների դատարան դիմելու օրենսդրական դրույթները Կոնվենցիայի 9 (2) հոդվածին համապատասխանեցնելու մասին:

2022-2023 թվականների Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգողի նախաձեռնությամբ և ԵՊՀ Ա. Իսկոյանի անվան էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի հետ համագործակցությամբ անցկացվել են ՀԿ-ների մասին օրենքում և դատական օրենսգրքում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու հարցեր: Զուգահեռ Ազգային Ժողովի պատգամավորներ Զարուհի Բաթոյանը և Հերիքնազ Տիգրանյանը նախաձեռնել են համապատասխան օրենսդրական փոփոխություններ: Նրանք մշակել և շրջանառել են «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, որը 2025 թվականի մարտին «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի եւ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության[37]: ԱԺ աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունը մարտի 28-ին եզրակացրել է, որ նախատեսված կարգավորումներում Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն: Նախագծերի փաթեթով նախատեսվում է ՀԿ-ների համար ստեղծել իրավական հիմքեր՝ իրենց կանոնադրական նպատակների շրջանակում պաշտպանելու կազմակերպության շահառուների կամ անդամների շահերը դատարանում, երբ դրանք վերաբերում են խտրականության արգելքին կամ կոլեկտիվ շահերի պաշտպանությանը: Այդ նպատակով առաջարկվում է «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն որի՝ կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու

[37] http://www.parliament.am/draft_history.php?id=15463&lang=arm

պաշտպանելու իր եւ իր անդամների, շահառուների՝ կազնակերպության կանոնադրական նպատակներից բխող իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում: Առաջարկվում է նաեւ կազմակերպությանը տալ իրավունք իր շահառուների կոլեկտիվ շահերի պաշտպանությանն ուղղված հայց ներկայացնելու դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում եւ կարգով:

31. 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵԲ-ԿԱՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ

Նշեք համապատասխան վեբկայքերի հասցեները, եթե այդպիսիք կան.

www.justice.am, www.gov.am, www.court.am, www.concourt.am, www.arlis.am, www.moj.am, www.datalex.am, www.armlaw.am, www.ombuds.am, www.parliament.am

32. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նշեք, եթե տեղին է, թե ինչ կերպ է Կոնվենցիայի իրագործումը նպաստում ներկա և ապագա սերունդների յուրաքանչյուր անձի՝ իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանությանը:

Տարի՝ ***2018-2020***

Կոնվենցիան նպաստում է շրջակա միջավայրի քաղաքականության հետ կապված որոշումների ընդունման ավելի արդյունավետ, թափանցիկ և վերահսկելի գործընթացի ձևավորմանն ու իրականացմանը՝ հանրության ավելի լայն և արդյունավետ մասնակցության շնորհիվ: Պետական մարմինները կարող են նաև օգտագործել դրա դրույթները իրենց շահերը հիմնավորելու և հանրության գիտելիքներից ու փորձից օգուտ քաղելու համար: Այսպիսով, Կոնվենցիան ամրապնդում է շրջակա միջավայրի պահպանությանը պատասխանատու պետական մարմինների դիրքերը, և հանրության աջակցությամբ նրանք կարող են ապահովել էկոլոգիական գործոնի հաշվի առնումը:

33. ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՓՈՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՈԴՎԱԾ 6-Ի ԵՎ 1-ԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

2023 թվականի հունվարի 17-ին ընդունվել է և 2023 թվականի օգոստոսի 10-ին ուժի մեջ է մտել Գենետիկորեն ձեվափոխված օրգանիզմների մասին ՀՀ օրենքը:

2023 թվականի սեպտեմբերի 15-ին, ՀՀ կառավարությունը հաստատել է ԳՁՕ-ների գործածության և կենսաանվտանգության հետևանքով շրջակա միջավայրին, մարդու կյանքին և առողջությանը, գյուղատնտեսական նշանակության հողերին սպառնացող վտանգների կանխման և հասցված վնասների վերացմանն ուղղված միջոցառումների պետական ծրագիրը[38]:
2023 թվականին ՇՄՆ-ն մեկնարկել է ԳՁՕ ուղղումը վավերացնելու նախապատրաստական աշխատանքներ: Աշխատանքային քննարկում է կազմակերպվել ՇՄՆ-ում: ԳՁՕ ուղղումը թարգմանվել է հայերեն: ՇՄՆ-ն դիրքորոշում է խնդրել գործընկեր նախարարություններից: ԳՁՕ-ների մասին ՀՀ օրենքը թարգմանվել է անգլերեն և էլեկտրոնային փոստով Համապատասխանության կոմիտեի քարտուղարի միջոցով փոխանցվել է կոմիտեին: 2024 հուլիսի 15-ին կողմը նաև պաշտոնապես դիմել է կոմիտեին՝ օրենքի համապատասխանությունը Կոնվենիայի ԳՁՕ ուղղմանը (GMO Amendment) համապատասխանությունը քննարկելու խնդրանքով:

34. 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 1-ԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Ներկայացրեք բոլոր խոչընդոտները, որոնք ի հայտ են եկել 6-րդ հոդվածի և 1ին հավելվածի յուրաքանչյուր դրույթի իրացման ընթացքում:

35. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 1-ԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացրեք լրացուցիչ տեղեկատվություն գենետիկորեն փոփոխված օրգանիզմների շրջակա միջավայր դիտավորյալ բացթողնման և շուկայում տարածման վերաբերյալ որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության վերաբերյալ 6bis հոդվածի իրացման վերաբերյալ, օրինակ՝ կան արդյոք վիճակագրական տվյալներ կամ այլ մատչելի տեղեկատվություն նման որոշումների կայացման գործընթացին հասարակայնության մասնակցության վերաբերյալ կամ 1bis հավելվածի 2-րդ կետով նախատեսված որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության բացառությունների մասին:

37. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե Համապատասխանության հարցերով Կոմիտեի առաջարկներից որևէ մեկի վերաբերյալ ներկայացված հաշվետվության քննարկման արդյունքում Կողմերի Հանդիպումն իր նախորդող նստաշրջանում միջոցառումներ է նախատեսել ձեր երկրի համապատասխանության առնչությամբ, խնդրում ենք նշել՝ ա) ինչպիսի միջոցներ են դրանք եղել, և բ) ինչ հատուկ

[38] ՀՀ կառավարության 14.09.2023 թ. N 1558-Ն որոշում https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=182477

միջոցներ է ձեռնարկել ձեր երկիրը իրականացնելու այդ միջոցները Կոնվենցիայի դրույթներին համապատասխանությունն ապահովելու համար:

Խնդրում ենք ըստ անհրաժեշտության կատարել հղումներ Զեկույցի համապատասխան բաժիններին:

Կոնվենցիայի կողմերի VII/8a որոշման կատարմանն ուղղված քայլերի պլան է կազմվել 2022 թվականին հունիսին, պլանի համաձայն իրականացվել են անհրաժեշտ գործողություններ, դրանց վերաբերյալ հաշվետվություններ են ներկայացվել Համապատասխանության Կոմիտեին: Սակայն դեռևս կան կետեր, որոնք սահմանված ժամկետում չեն իրականացվել, այնուհանդերձ այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: